ԳԻՐՔ

ԳՈՐՔ

ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

100

ՀՀ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ԳԻՐՔ
ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ 1994
«Շաղիկ»

Թույլատրված է օգտագործման
ՀՀ «Մխիթար Սեբաստացի» կրթական համալիրի
հոգաբարձուների խորհրդի կողմից

Գիրք ծնողների և ուսուցիչների համար:-48էջ, Երևան-1994թ.-«Շաղիկ»

Խմբագիր՝ Անահիտ Արևաուդյան

Կազմը՝ Գոհար Սանոյան
Էջադրումը՝ Համլիկ Բալայան
Սրբագրիչ՝ Ռուբեն Վարդանյան
Տեխ. խմբագիր՝ Շուրա Հայրյան

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սիրելի՛ գործընկեր, եթե Ձեր երեխան կամ սանը առաջին դասարանցի է, մենք սիրով առաջարկում ենք Ձեզ մեր ծառայությունը: Այս գրքույկով Դուք կծանոթանաք երեխայի ուսման առաջին տարվանն ուղղված ծրագրային խնդիրներին, դրանց հիման վրա կազմված գիրք-տետրերի, ձեռնարկների հետ աշխատելու սկզբունքներին, որ տարիների ընթացքում ծնվել, մշակվել են մեր՝ ՀՀ «Մխիթար Սեբաստացի» կրթական համալիրում:

Ձեզ օգտակար լինելու համար փորձել ենք ըստ գործածության ժամկետների, հերթականությամբը անդրադառնալ բոլոր գիրք-տետրերին, ձեռնարկներին, դրանցով աշխատելու առանձնահատկություններին: Դրանք մի պարզ փաթեթով առաջարկում ենք Ձեզ:

Ոչինչ որ դպրոցներում այլ ծրագրերով են առաջնորդվում: Մեր մանկավարժական սկզբունքը երեխային չվնասելն ու նրա բնույթից չշեղվելն է: Շատ օգտակար կլինի, որ յուրաքանչյուր ծնող տանը երեխայի հետ աշխատելու համար ձեռք բերի առաջարկվող փաթեթը:

Ի՞նչ կա փաթեթում:

1. «Ոսկեմատենիկ» - բերանացի անելու ժողովածու
2. «Խամաճիկ» - պատկերազարդ տետր
3. Այբբենարան
4. «Լիլիթ» - մայրենի լեզվի առաջին ընթերցարան
5. «Մատենիկ» - մայրենի լեզվի երկրորդ ընթերցարան
6. Թվաբանության գիրք-տետր, առաջին մաս
7. Թվաբանության գիրք-տետր, երկրորդ մաս
8. Թվաբանության գիրք-տետր, երրորդ մաս
9. Գիրք ծնողների և ուսուցիչների համար
10. Երաժշտական նմուշների ձայնագրություններ

Լավ կլինի, եթե Ձեր երեխան ունենա գունավոր մատիտներ, ֆլոմաստերներ, լավ վրձին ու մկրատ, սոսինձ ու գունավոր թղթեր:

Մենք որպես սեղանի գիրք ունենք և Ձեզ էլ խորհուրդ ենք տալիս կարդալ.

1. ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ - «Ուսումն մայրենի լեզվի», «Մայրենի լեզվի քերականության տարերքը», «Գրագիտություն ուսուցանելու ուղիղ ճանապարհը և նրանից խոտորվիլը», «Նախագի-

տելիք գիտակցաբար կարդացնելու մասին»

2. ԼԵՎ. ՏՈԼՍՏՈՅ - «Новая азбука»

3. ՋԱՆԻ ՌՈԴԱՐԻ - «Երևակայության քերականություն»

4. ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՈՒՇԻՆՍԿԻ - «Նախակրթության մեթոդիկա», «Մայրենի լեզու»

5. «Մխիթար Սեբաստացի» կրթական համալիր - «Ծրագրերի ժողովածու»

Համեցեք մեր կրթահամալիր, միշտ պատրաստ ենք համագործակցելու.

ԳԵՎՈՐԳ ՀԱԿՈԲՅԱՆ

Կրթահամալիրի մանկավարժական հետազոտական-մեթոդական կենտրոնի տնօրեն:

Հասցեն՝ Հարավարևմտյան կանգված, Բ1 թաղամաս, Առնո Բաբաջանյանի պողոտա, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի Մայր դպրոց, հեռախոս՝ 73. 29. 90.

ԱՆԱՀԻՏ ԱՐՆԱՈՒԴՅԱՆ

Կրթահամալիրի Երևանի դպրոց-մանկապարտեզի վարիչ

Հասցեն՝ Հարավարևմտյան կանգված, Բ4 թաղամաս, հեռախոս՝ 74. 21. 72.

ԱԻԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կրթահամալիրի Երևանի նախակրթարանի տնօրեն

Հասցեն՝ Հարավարևմտյան կանգված, Բ1 թաղամաս, հեռախոս՝ 73. 86. 55.

ՄԱՐԻԵՏ ՍԻՄՈՆՅԱՆ

Մայրենի լեզվի մասնախմբի անդամ

Հասցեն՝ Հարավարևմտյան կանգված, Բ1 թաղամաս, կրթահամալիրի Մայր դպրոց, հեռախոս՝ 73. 23. 30.

ԼԵՅԼԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կրթահամալիրի երաժշտական դպրոցի տնօրեն

Հասցեն՝ Հարավարևմտյան կանգված, Բ1 թաղամաս, կրթահամալիրի Մայր դպրոց, հեռախոս՝ 73. 06. 74.

ԵՐԲ, ԻՆՉԻՆ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՍԿՍԵԼ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ.

Առաջարկվող հավաքածուն ինչպես դպրոցական, այնպես էլ տնային ուսուցում է ենթադրում: Սկսելով երեխայի ուսուցումը՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ երեխան ուսուցումից անկախ էլ ամեն օր զարգանում է: Բավականին դժվար է ուսուցումն սկսելու ամենահարմար ժամանակը կռահելը: Բայց ավելի լավ է ուսուցումն սկսել մի քիչ ուշ, քան մի քիչ շուտ: Ծնողներին խորհուրդ ենք տալիս սեփական երեխաների մասին իրենց կարծիքը չափավորելու և ուշադիր հետևելու, թե ինչպես է երեխան ընկալում: Եթե երեխային սկսում եք ուսուցանել ավելի վաղ, քան նա հասունացել է դրա համար, կամ սովորեցնել մի առարկա, որի բովանդակությունը դեռ չի համապատասխանում երեխայի հասունությանը, ապա անխուսափելիորեն կհանդիպեք բնական դժվարությունների: Եվ որքան համառորեն պայքարեք տարիքի հետ կապված այդ դժվարությունների դեմ, այնքան կվնասեք ձեր երեխային: Միայն ժամանակը կարող է հաղթահարել դրանք: Դուք նրանից պահանջում եք անհնարինը. պահանջում եք, որ նա սեփական զարգացումից բարձր կանգնի, մոռանալով, որ ամեն մի օրգանական զարգացում տեղի է ունենում որոշակի ժամանակամիջոցում, և որ մեր խնդիրը ոչ թե այդ զարգացումը արագացնելը կամ կասեցնելն է, այլ միայն դրան հոգեկան առողջ սնունդ տալը:

Եթե երեխայի ուշադրությունը թույլ է, խոսքն անկապ է ու կցկտուր, բառերի արտասանությունն անհաջող, ապա ավելի լավ է՝ մի սկսեք կանոնավոր ուսուցումը, այլ նախապատրաստեցեք դրան՝ երեխաներին շրջապատող առարկաների մասին զրույց անցկացնելով, նրանց համար հասկանալի որևէ երգի ուսուցումով, վարժեցրեք նրա ձեռքը ապատ նկարչությամբ:

Ինչի՞ց պետք է սկսել ուսուցումը: Այս հարցին պատասխանելու համար պետք է հիշենք, որ իր բնությամբ երեխան անընդունակ է որևէ ուղղությամբ հաստատուն գործունեությամբ զբաղվելու: Երեխայի գործունեության տեսակը պետք է հաճախակի փոխել: Այս դեպքում թվում է, թե նա հրգնել չունի, իսկ երբ զբաղմունքը միօրինակ և երկարատև է, անգամ եթե այն շատ պարզ ու հեշտ է և սկզբում ոգևորել է երեխային, շատ շուտ կձանձրացնի և կհոգնեցնի Ձեր փոքրիկին: Այս նույնը նկատվում է և երեխայի հոգեկան գործունեության մեջ: Հետևաբար երեխայի մտավոր գործունեությունը նույն ուղղությամբ երկար ժամանակ պահելն անհնար է և անիմաստ: Հենց բուն զբաղ-

մունքի փոխելը երեխայի վրա ներգործում է նույնիսկ լիովկատար հանգստից ավելի լավ: Երեխան, երևում է, հոգնել է կարդալուց, թուլացել է նրա ուշադրությունը, դադարել է հասկանալուց. հնարավորություն տվեք երեխային գրելու, նկարելու, հաշվելու, երգելու և կնկատեք, որ վերադառնալով ընթերցանությանը՝ երեխան և՛ ավելի ուշադիր է դարձել, և՛ ավելի լավ է հասկանում: Նախնական կրթության առարկաների օգտակար և նույնիսկ անհրաժեշտ բազմազանությունը հնարավոր է միայն այն պայմանով, որ ոչ մի առանձին առարկա չլինի, այլ բոլորը միաձուլվեն որպես հասուն մարդու բնական ներգործություն. ուսուցիչ, ծնող, ավագ եղբայր ու քույր՝ մարդ, ով սնունդ է տալիս երեխայի գործունեությանը և այն ուղղում մի խելացի նպատակի՝ երեխայի մտայինի, հոգեկանի ու մարմնականի զարգացմանը:

Երեխայի ճանաչողության մեթոդը խաղն է: Խաղը երեխայի ամենալուրջ զբաղմունքն է, և դրա միջոցով պետք է սկսել ուսուցումը: Մեծերս պետք է ընդունակ լինենք նույնքան լուրջ մոտենալու խաղին, որքան փոքրերը: Հենց առաջին պարապմունքից, որպես խաղի կանոն, երեխային պետք է սովորեցնել, որ իր պարտականությունները կատարի, ապա հասնել նրան, որ երեխան դրանից հաճույք ստանա: Եթե երեխայի հետ տանն եք պարապում, հենց սկզբից նշանակեք որոշակի տեղ ու ժամանակ: Ռող դասի ժամանակ օգտագործվող իրերն ու գրքերը մնան իրենց տեղում, և թող երեխաները դասից դուրս ձեռք չտան դրանց: Հիշեցեք, որ խախտելով այս տարրական կանոնները, դուք երեխայի հոգում անկարգության սերմ եք ցանում, որը, ժամանակի ընթացքում զարգանալով, կարող է թունավորել նրա ամբողջ կյանքը:

Պետք է հիշեք, որ դպրոցական տարիքի երեխայի կյանքն ամբողջությամբ դպրոցին ու դասին չի պատկանում: Դպրոցը միայն չնչին մասն ունի երեխայի բնական զարգացման մեջ: Նրա վրա ավելի մեծ ներգործություն ունեն ժամանակը, բնությունը և ընտանեկան կյանքը: Հետևաբար ուսուցման պրոցեսը այնպես պետք է կազմակերպել, որ երեխաներն իրենց բոլոր դասերը սովորեն դասարանում (այդ տարիքի երեխաները դասից դուրս հանձնարարություններ չեն կարող ունենալ): Ուսուցչի հսկողությամբ ու ղեկավարությամբ երեխան պետք է սովորել սովորի:

Առաջարկվող հավաքածուի գիրք-տետրերը կազմված են վերը շարադրված սկզբունքներով, և ենթադրվում է, որ կհեշտացնեն ծնողի և ուսուցչի գործը՝ երեխայի սկզբնական ուսուցումը կազմակերպելու գործում:

Հաջողություն Ձեզ ամենակարևոր գործում

Գևորգ Հակոբյան

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Մայրենի լեզվի ուսուցումը խիստ պայմանական է, քանի որ մարդը մայրենի լեզու յուրացնում է ամբողջ կյանքի ընթացքում, կենդանի շփման, հաղորդակցման միջոցով:

Տիրապետել մայրենիին՝ նշանակում է ապատ, անկաշկանդ և գրագետ խո՞սք, հաղորդակցությո՞ւն, մտածողությո՞ւն, իհարկե, մի ամբողջություն, որը ձևավորված և որոշակի կրթություն ստացած անձին է հատուկ: Այդ կրթության որոշակի հատվածը, իր խնդիրներով, դպրոցինն է: Ֆունկցիոնալ հաղորդակցությունը, պատճառաբանված գործունեությունը, նպատակային աշխատանքը, երեխայի հետ միայն հավասարը - հավասարի հետ շփումը կարծում ենք կստեղծի այն բնական միջավայրը, որն անհրաժեշտ է զարգացող մարդուն:

Մայրենիին տիրապետելու կարևոր պայմաններից են կարդալն ու գրելը: Հայտնի ճշմարտություն է, որ կարդալ սովորում են կարդալով, գրել՝ գրելով: Իսկ գրելու կամ կարդալու արդյունավետության համար շատ կարևոր ենք համարում այն [illegible] խան ինչո՞ւ պետք է կարդա և ինչո՞ւ պետք է գրի: Այս ինչուների պատասխանը մեր դպրոցի սանը փնտրում է դեռ գրաճանաչ դառնալուց առաջ՝ ինչի՞ համար է տառը:

Առաջին դասարանում մայրենիի ուսուցումը պայմանականորեն բաժանել ենք մի քանի փուլի:

ա. ծանոթացում - դպրոց-դպրոց խաղալ

բ. նախագրային շրջան

գ. այբբենական շրջան

դ. հետայբբենական շրջան

Ուսուցման կարևոր նախապայմանը երեխային չվնասելն է: Ուսուցումը պիտի հարմարեցվի երեխայի բնույթին, պիտի մատուցվի նյութ, որ համապատասխանում է մանկան երևակայությանը, նրա մտավոր և հոգևոր պահանջմունքներին և իհարկե տարիքին:

Յոթ տարեկան երեխան եկավ դպրոց: Նրա համար այդ դպրոց կոչվածը անծանոթ, օտար աշխարհ է: Պետք է նրան օգնել իրեն լավ զգալու այդ «աշխարհում», պետք է բացել նրա լեզուն: Մի բան պարզ է՝ երեխան սիրում է խոսել այն ամենի մասին, ինչ անմիջականորեն կապված է իր անձի հետ՝ սկսած իր անունից, վերջացրած խաղալիքներով: Ուրեմն, առաջին մեկ-երկու շաբաթում անշտապ պատմում են իրենց մասին, իրենց ծնողների, ըն-

կերների, խաղալիքների, սիրած կբաղմունքների ու հեքիաթների մասին, այն մասին, թե ինչպե՞ս են քնել, ի՞նչ երազ են տեսել, առավոտյան ի՞նչ են արել:

Այս ընթացքում շատ օգտակար են նաև «ճիվ-ճիվ» և նման այլ խաղերը: Եթե իրենք գիտեն, լավ: Եթե չգիտեն, շատ հեշտ կարելի է սովորեցնել:

Երեխաները բաժանվում են խմբերի (4-5 հոգի) և հաշվում «բռունցքները»: Որի վրա վերջանում է ոտանավորը, այդ բռունցքը դուրս է գալիս. խաղում են, մինչև մնում է մեկ բռունցք:

Էկե, դուկե, տրմրպա,
Չալան-չուկե պուպուպա,
Մախտե կոճակ, դան պլոճակ,
Ճան-ճուկ:

Այս շրջանում շատ կլինեն լեզվական սայթաքումներն ու անհարթությունները: Ոչ մի դեպքում պետք չէ շտկել, ուղղել: Պիտի երեխային վստահություն ներշնչել, որ նա խոսի, արտահայտվի, ասի իր մտածածը: Նա պիտի կարողանա համարձակ պատմել իրեն ծանոթ հեքիաթներն ու պատմությունները՝ առանց սխալվելու վախի: Կարող են ասել իրենց ծանոթ հանելուկները, փորձեն գուշակել պարզագույն հանելուկների պատասխանները:

Երեխաները մտերմանում են իրար հետ, ստեղծվում է բնական մթնոլորտ:

Հաջորդը՝ նախագրային շրջանը (Աղայանը այն կոչում է «Լուծումն պարբերությանց»), ունի իր հստակ խնդիրը՝ երեխաներին նախապատրաստել տառաճանաչմանը: Մինչև տառ սովորելը, երեխան պիտի հասկանա՝ ինչ է հնչյունը, որ այն օդից վերցրած ինչ-որ անորոշ բան չէ, նա պիտի պարզ լսի ու արտաբերի բառի բոլոր հնչյունները:

Այս խնդրի լուծումը պիտի սկսել կարճ պատմությունից: Հետո պետք է ավելի կարճ պատմություն պատմել, խոսքը կարճացնել մինչև նախադասություն:

Հաջորդ քայլը նախադասության տարրալուծումն է բառերի: Պարզագույն մի օրինակ՝ գրիչը գցել սեղանին և հարցնել.

- Ի՞նչ եղավ:
- Գրիչն ընկավ սեղանին:
- Հիմա ես այն ավելի երկար կդարձնեմ:
Սպիտակ գրիչն ընկավ ուսուցչի սեղանին:
Ինչպե՞ս երկարեց իմ խոսքը:

Երեխաները կասեն, որ ուսուցիչը բառեր ավելացրեց:

- Ուրեմն մեր խոսքը կազմված է բառերից:

Նախադասության վերլուծումը բառերի կարելի է անել ծափերով, մատները ծալելով, հետո՝ բառերի փոխարեն նշաններ դնելով, նախադասության ամեն մի բառը նկարելով: Քանի որ այս շրջանը համընկնում է նախաթվային շրջանի հետ, բառերը չենք հաշվում: Կարելի է յուրաքանչյուր բառի համար նշան ընտրել:

Երբ երեխաները կարճ նախադասություններով վարժվում են այս աշխատանքին, օգտագործվում են «Ոսկեմատենիկի» առածները:

Օժանդակ բայը որպես բառ ընկալելու համար պետք է օգտագործել «Ե՛ս եմ խոսում» կաղապարը (հիմա ո՞վ է խոսում, ո՞վ է երգում և նման հարցերի պատասխանները):

Տիգրա՛նն է խոսում:
Աշո՛տն է նկարում:
Այս և մնացած բոլոր դեպքերում շատ է օգնում բառը շեշտելը՝
Գարունը եկա՛վ: Ծառերը ծաղկեցի՛ն:

Հաջորդ քայլը վանկատումն է: Այս դեպքում համեմատվում են բառերը: Օրինակ՝ վարդ բառն է երկար, թե՞ ա-շա-կերտ:

Բառերի վանկերը լավ կգայվում են երգելիս.

Ա՛նձ-րե՛ն և՛-կավ շա՛-ղա՛-լե՛ն,
Ո՛ւ-ռո՛ւ տե՛-րև՛ դո՛-ղա՛-լե՛ն:

Փաստորեն բառը կտոր-կտոր է արվում: Դա արվում է շեշտելով, վանկերի արտաբերումը երկարացնելով՝ երգելով (շա՛-տա՛-կե՛ր):

Պիտի սկսել երկվանկ բառերից, անցնել եռավանկերին: Երբ երեխաները կսկսեն վարժ վանկատել, այդ դեպքում միայն կարելի է միավանկ բառերին անդրադառնալ: Շուն, տուն, ... բառերը շեշտելով, երկարացնելով, երգելով չեն քանդվում:

Վանկատմանը հաջորդում է բառերի տարրալուծումը հնչյունների:

Սկզբում երեխաները տարբեր ձայներ են հանում: Հետո՝ հնչյուն-ձայն: Ասենք, քամին ի՞նչ ձայն է հանում՝ ՀՀՀ՛, սս՛, իսկ փոթորիկը, օձը...

Բնության մեջ էլ ի՞նչ ձայներ կան:

Հետո ուսուցիչը բառեր է ասում (հիմնականում միավանկ), առաջին կամ վերջին հնչյունը փոխելով, և առաջարկում գտնել սխալ հնչյունը, իհարկե, ընտրելով շատ ծանոթ բառեր:

Ասենք՝ կաթի փոխարեն քաթ, քամի - կամի, ջուր - ճուր, ծառ -

ցառ, փուշ - պուշ, դուռ - տուռ, տանձ - դանձ, խնձոր - ղնձոր, ջամիչ - ջամիչ, կեռաս - քեռաս, բաժակ - բաժախ, կատակ - կատաս, մատիտ - մատիդ, քիթ - քիդ, բերան - բերամ:

Ուսուցիչը երեխաներին առաջարկում է ամեն հնչյունի փոխարեն որևէ նշան հնարել-նկարել, նրա մոտ ամրապնդվում է հնչյուն-նշան-տառ կապի գաղափարը: Հետո արդեն հեգվող բառը ուսուցիչը կարող է գրատախտակին գրել: Հեգվող բոլոր բառերը կարելի է նկարել և նշաններ հորինել նաև ամբողջ բառի համար: Այս դեպքում ոչ մի սահմանափակում չպիտի լինի. փոքրիկները կարող են նկարել ոչ միայն տանձն ու խնձորը, այլև ծիծաղն ու տխրությունը, քամին ու ուրախությունը, իսկ տակը կգրեն իրենց նշանները:

Նկարելու մասին:

Երեխան պիտի նկարի դպրոց մտնելու օրվանից:

Իսկ ինչո՞ւ և ինչպե՞ս պիտի նկարի:

Սկզբում՝ ինչ ուզում է: Հետո նկարում է իր և ընկերների պատմած, լսած, հորինած պատմությունները: Հետո կարելի է նկարը «նպատակաուղղել»:

Ի՞նչ է նշանակում սա: Նկարը օգտագործել որպես լեզու: Երեխաները ուսուցչի և ընկերոջ հետ հաղորդակցվում են նկարով: Օրինակ՝

նկար - նամակ
նկար - պատմություն
նկար - նախադասություն
նկար - բառ
նկար - նշան
նկար - տառ

Միդա Պետրոսյան

ԽԱՄԱՃԻԿ

Առաջին դասարանցու պատկերազարդ տետր

Նախաայբբենական շրջանն առավել արդյունավետ անցկացնելու նպատակով առաջարկում ենք «Խամաճիկ» պատկերազարդ տետրը: Խնդիրներն այստեղ շատ հստակ են ու կարևորության առումով իրար չեն վիջում:

1) Նկարների օգնությամբ խոսեցնել երեխային:

ա) Երեխան հանդիպել է ծանոթ պատմության, ավելի վստահ կլգա իրեն, դժվար չի լինի խոսելը:

- Պատմում է նկարը:
- Թվարկում է հերոսներին, որոնց հետ ինքը ծանոթ է:
- Արտահայտում է իր վերաբերմունքը:
- Ընտրում, ներկում, հագցնում է իր սիրելի հերոսին:

բ) Երեխան սկսում է նկարն ընկալել որպես իրեն ծանոթ պատմության մի դրվագ (կտոր), պատմության մի մաս:

- Նկարում աղվեսը փախչում է՝ ինչո՞ւ:
- Ինչպե՞ս է ավարտվում այս պատմությունը:
- Ի՞նչ էր եղել մինչև այդ:
- Ո՞ւմ տունն է սա:
- Ովքե՞ր են ապրում այս անտառում:
- Հեքիաթը պատմիր վերջից:
- Ի՞նչ եղավ հեքիաթի ավարտից հետո:

2. Նկարների օգնությամբ նպաստել մտածողության զարգացմանը:

ա) Ծանոթ պատմություն է, բայց...

- Եղել է, չի եղել, բայց այսպե՞ս է եղել:
- Հերոսը հայտնվել է անծանոթ իրավիճակում:
- Ծանոթ պատմության մեջ նոր հերոս կամ հերոսներ են հայտնվել (կամ անհայտացել):
- Մի հեքիաթի սկիզբը կապիր մեկ այլ հեքիաթի ավարտի հետ:
- Փոխիր տվյալ պատմության սկիզբը (ավարտը):
- Մի չար հերոս հանկարծ սկսել է բարի գործեր անել (կամ հակառակը):
- Մի քանի հեքիաթի հերոսներ թող հանդիպեն մի պատմության մեջ:
- Քեզ ծանոթ այս պատմությունը պատահել է մի ուրիշ տեղ, ուրիշ հերոսների հետ:
- Ի՞նչ հեքիաթներ է հիշեցնում քեզ այս անտառը:

Այս տետրի նպատակն այնքան ուսուցանելը չէ, որքան երեխայի ինքնավստահությունն ամրապնդելը, նրա հետաքրքրութ-

յունը շարժելը, խաղի մեջ ներքաշելը:

«Խամաճիկում» երեխան նկարելու է; ներկելու է նկարները, և դրանով նրա տեսերը տարբերվելու է մյուսներից: Ահա ձեզ հնարավորություն նրա հետ առանձին զրուցելու և նրա գործընկերը դառնալու:

- Նապաստակն ի՞նքը խնդրեց իրեն այսքան գունավոր հագուստ հագցնել:

- Հրաշալի ամուր պատնեշ ես կառուցել գայլի առաջ:

- Սա որտեղի՞ց է հայտնվել այս պատմության մեջ:

- Այս խորամանկ աղվեսի հե՞տ ես չարաճճիություն արել, լավ եք խզմզել էջը:

«Խամաճիկից», ի վերջո, մնալու են դիմակներ, որոնք անավարտ վիճակում բաշխված են տետրում. պետք է միայն կտրել, ներկել, սոսնձել: Դիմակները կօգտագործվեն հեքիաթը, պատմությունը, բանաստեղծությունը բեմականացնելիս: Առանձին էջերի նկարները ներկելուց, ձևավորելուց հետո ցուցադրվելու են դասարանական ցուցահանդեսում, իսկ որոշ էջեր էլ վերածվելու են քարտերի, որոնք կարող են օգտագործվել նաև այբբենական և հետայբբենական շրջաններում:

Հիշեցնենք, որ խոսքը վերլուծելով պատմությունից - հնչյուն և համադրելով հնչյունից-պատմություն՝ երեխային պետք է բերել տառի անհրաժեշտության գիտակցմանը: Այս փուլը մեթոդիկայի առումով նմանվում է նախաթվային շրջանին: Այստեղ էլ հնչյունն արտաբերելու համար պայմանական նշան կարող է հանդիսանալ գունավոր քարտը, երկրաչափական պատկերը կամ պարզապես երեխայի հորինած որևէ պատկերը: Օրինակ, եթե պայմանավորվենք, որ կարմիր քարտը տեսնելիս պիտի արտասանեն «ա», իսկ դեղինը՝ «ու», կանաչը՝ «կ», կապույտը՝ «ս», ապա խաղը կստացվի այսպես. Կարդա.

կարմիր	կանաչ - ակ
դեղին	կապույտ - ուս

Այսպես կարելի է խաղալ վանկի հետ, բառի հետ: Կամ եթե պայմանական նշանը որևէ առարկա է կամ նկար, կարելի է «կարդալ» մի ամբողջ նախադասություն, և դրանք համադրելով՝ պատմություն հորինել:

Այսպիսով, մենք շատ ենք կարևորում նախապատրաստական, նախաայբբենական փուլերը և կարծում ենք, որ այն կարող է տևել 2-2,5 ամիս, երբ երեխան ավելի ինքնավստահ է դառնում, ձեռք է բերում անհրաժեշտ համարձակություն, վստահում է շրջապատին, կարողանում է առանձնացնել բառը, հեզել, պարզլսում և արտաբերում է բոլոր հնչյունները:

Անահիտ Արնաուդյան

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Այբբենական շրջանն իր խնդիրներով ավելի համեստ է և կարող է տևել 15-20 օր: Փորձը ցույց է տալիս, որ այս ժամանակահատվածը լրիվ բավարար է և երեխայից կամային ճիգեր չի պահանջվում ծանոթանալու և մտապահելու համար տառերն ու կետադրության նշաններից մի քանիսը:

Ճանաչել տառը, սա է միակ խնդիրը, որ մենք դնում ենք երեխայի առջև այբբենական շրջանում: Տառեր գրելու փորձերը, վանկեր և բառեր, երբեմն նախադասություն կառուցելու աշխատանքներն այս փուլում ևս ուղղված են նշանը մտապահելուն: Պատկերացրեք, որ եղել են տարիներ, երբ մեր ուսուցիչներն աշխատել են առանց «Այբբենարանի»: Պահանջն այսպիսին էր՝ նախագրային շրջանում խոսքի վերլուծությունը մինչև հնչյուն հասցնելով՝ երեխայի հետ ստեղծել-հորինել սեփական այբուբենը, ապա առանձին քարտերի վրա տառեր և վանկեր ունենալով՝ բառեր, նախադասություններ կառուցել ու այսպիսով յուրացնել մայրենիի այբուբենը: Մինչև մեր ստեղծած համեստ, քիչ թե շատ անսովոր «Այբբենարանը» երեխաների ձեռքը տալը, կա մի բավմաբովանդակ հաճելի խաղ ևս. երեխան ծանոթանում է տառ-տիկնիկներին, որոնք պատրաստելու է մեծերի օգնությամբ (դրանց նկարները «Այբբենարանում» կան), ծեփելու է պլաստիլինով, շոշափելու է, ծոմռելու, կգալու, խաղալու է, որպեսզի հետո ավելի հեշտ լինի դրանք ընկալել որպես հնչյունի նյութականացում:

«Այբբենարան» կոչվող գիրք-տետրը, որ առաջարկում ենք Ձեզ, օգնելու է երեխային խումբ-խումբ ծանոթանալու տառերին, տեսնելու կետադրության նշաններից մի քանիսը: Բոլոր առաջադրանքներն ուղղված են տառը հնչյունին կապելուն, տառը գործածելուն, գրելուն, կարդալուն: Երբ երեխան խաղում է տառերով, հաճախ կարող է հանդիպել իմաստից զուրկ հնչյունախմբերի, որոնք «կարդալը» ևս կարևոր է, որովհետև ավելի է ընդգծվում հնչյուն-տառի իմաստատարբերակիչ դերը: «Այբբենարանում» երեխան կհանդիպի և՛ տպագիր, և՛ ձեռագիր, և՛ մեծատառ, և՛ փոքրատառ գրերին: «Այբբենարան» գիրք-տետրով աշխատելիս վնասակար ենք համարում երեխային վարժ կարդալ սովորեցնելու փորձեր անելը, այդ նպատակով նրան անգամ մեկ, բայց մեծ նախադասություն գրել կամ կարդալ տալը: Այս փու-

լում աշխատանքի միակ ձևը իր տարատեսակներով ցույց է տրված «Այբբենարանում», այն է՝ ծանոթ տառերով վանկեր, վանկերով՝ բառեր, բառերով պարզ նախադասություններ կառուցել, դրանք կարդալ ու գրել: Խնդիրը մեկն է՝ ճանաչել և մտապահել տառը, կարողանալ լսել և գրել արտաբերվող հնչյունին կամ հնչյուններին (բառի տեսքով) համապատասխանող տառերը և հակառակը՝ արտասանել տվյալ տառին համապատասխանող հնչյունը: Այս պահին մեծ ողբերգություն չի լինի, եթե երեխան երկիրնչյուն տառերը սխալ վերարտադրի. ոչնին գրի՝ վօչնի կամ տեռևը՝ տերէվ: Սրա ժամանակը կգա: «Այբբենարան» գիրք-տետրի աշխատանքները համբերատար շարունակում է «Լիլիթ» գիրք-տետրը: Շատ կարևոր է, որ երեխան «Այբբենարան» գիրք-տետրով աշխատի մեծերի նվազագույն միջամտությամբ: Խրախուսում ենք ավագների միայն խաղընկեր դառնալը, խաղի շուրջ ստեղծագործելը: Օրինակ՝ «Տառքաշուկ» խաղալիս (սա ձեվ լավ ծանոթ «Լոտոյի» մի տեսակ է) կարելի է պատրաստել քարտեր ոչ թե տառերով, այլ վանկերով. կստեղծվի հնարավորություն վանկեր համադրելու, վանկերով խաղալու, կարդալու, գրելու:

Կարծում ենք, կարիք չկա հիշեցնել, որ «Այբբենարանը» ևս կապված է գիրք-տետրի սկզբունքով, և երեխան լայն հնարավորություն ունի ուզածի չափ գրելու փորձեր անել, նկարել, կտրել-սոսնձել:

Անահիտ Արնաուդյան

ԼԻԼԻԹ

Առաջին դասարանցու մայրենիի առաջին ընթերցարանը

Գիրք-տետրը հանձնարարվում է տառուսուցումից հետո: Ուսուցումը դարձնել հաճելի, խաղային, օգնել երեխային որքան հնարավոր է հեշտությամբ հաղթահարելու հետայբբենական շրջանի դժվարությունները, կարգացնել երեխայի միտքը՝ դարձնելով նրան ավելի ընկալունակ. սրանք են ձեռնարկի և նրանով աշխատող ուսուցչի նպատակները:

Գիրք-տետրով աշխատելիս երեխան ոչ միայն ստուգաբար կկարգացնի կարդալ-գրելու իր ունակությունը, այլև կարդացածը գործածելու որոշ հմտություն ձեռք կբերի՝ միաժամանակ լուծելով մի շարք այլ խնդիրներ:

Երեխաները սիրում են պատմել իրենց, իրենց շրջապատող մարդկանց ու աշխարհի մասին: Գիրք-տետրը այդ հնարավորությունը տալիս է: Պատահական չէ կրուցակցի՝ Լիլիթի գոյությունը, որի օգնությամբ հանձնարարությունների լեզուն դառնում է ավելի մատչելի ու անմիջական: Հենց առաջին էջից երեխան ծանոթանում է Լիլիթի հետ, նկարում է իրեն և իր ուսուցչին: Ճիշտ կլինի, որ նախապես դասարանում կրուցեն այս հարցերի շուրջ.

- Քանի՞ տարեկան ես:
- Ե՞րբ է քո ծննդյան օրը:
- Ամենից շատ ի՞նչ ես սիրում:
- Իսկ ի՞նչ չես սիրում:
- Աղմկել սիրո՞ւմ ես:
- Ի՞նչ կուզենայիր ունենալ:
- Ամենից շատ քո ո՞ր խաղալիքն ես սիրում:

Անշուշտ, շատ հարցեր կծնվեն կրույցի ժամանակ. սակայն կարիք չկա կրույցը ձգձգել: Եվ այսպես, ծանոթացանք: Երեխաները անցնում են անհատական աշխատանքին: Քանի որ առաջին դասարանում ուսուցումն անառարկայական է, նյութը դասաժամերի բաժանելն անիմաստ է դառնում: Յուրաքանչյուր օր աշակերտը կարող է կատարել 2-4 առաջադրանք, որը չի նշանակում, թե առաջադրանքները պիտի կատարվեն միանգամից: Մինչև տվյալ օրվա դասերի ավարտը երեխաները մի քանի անգամ կանդրադառնան «Լիլիթին»:

Սկզբում աշխատանքի շինանյութը բառն է: Երեխան գրում է

բայ թողնված տառը, բառ է հավաքում.

- Գտի՛ր՝ ո՞ր տառն է պակաս:

- Տրված է տառերի քանակ (նկարչական տարբեր լուծումներով), ըստ դրա բառեր պետք է գրել:

- Բառում խառնված է տառերի դասավորությունը, ուղղի՛ր:

- Գրի՛ր կենդանիների անունները:

- Ո՞վ է սա:

- Գրի՛ր խաղալիքների անունները:

- Կարդա՛՝ մտովի պտտելով շրջանը և գրի՛ր բառերը:

Հետագա աշխատանքի նյութը՝ նախադասությունն է, իսկ վերջում 3-4 փոքրիկ պատմություն է կետեղված, որոնց ընթերցումը ավելի դյուրին դարձնելու համար որոշ բառեր փոխարինված են նկարներով: Փաստորեն երեխան նորից անցնում է տառ - բառ - նախադասություն - պատմություն «ճանապարհը»:

Պակասող տառը գտնելու հանձնարարությունները կատարելիս երեխաներին պետք է սովորեցնել օգտվել այբուբենից: Այսպես՝ ոչ թե փնտրել բառեր, այլ բայ տեղերում այբուբենի տառերը հերթով մտովի տեղադրել և գրել բոլոր ստացված տարբերակները: Խառնած տառերով, վանկերով, բառերով խնդիրներն ու առաջադրանքները ևս լուծվում են փորձելով. երեխան կմիացնի պատահական վանկեր, կստանա «տարօրինակ» բառեր, բայց կարձանագրի միայն իմաստ ունեցողները: Օրինակ՝ երեխան կստանա ար- ժակ, բա - դուկ և նման այլ բառեր, բայց կգրի արդուկ, բաժակ... կամ՝ պատ - փոր, սա - մաս տարբերակների մեջ կհայտնվեն սափոր, սապատ բառերը, որոնք էլ նա կգրի: Կարելի է անվերջ խաղալ տառ բայ թողնելով՝ «Փախած տառը», վանկերը փոխատեղելով՝ «Խառնաշփոթ» խաղերը, եթե երեխաներին հնարավորություն տրվի ստեղծագործելու, հորինելու: Դասարանը կբաժանվի երկու խմբի: Մի խումբը կասի, մյուսը կգուշակի, հետո դերերը կփոխվեն:

Շատ օգտակար ենք համարում բառերի իմաստային հակադիր, նման, նույնանիշ կույգերի հետ աշխատանքները: Հականիշները կուգադրելիս երեխաներին գիրք-տետրը հուշում է, որ նախ համեմատեն այն պատկերները (եռանկյուն, քառակուսի, շրջան և այլն), որոնց մեջ գրված են բառերը: Նման պատկերների մեջ գրված բառերով երեխան կույգեր կկազմի, իսկ ավելորդ բառը «մենակ կմնա»:

Կարծում ենք, լեզվակցայողության կարգացմանը կնպաստի բառերի բնութագրումը. հականիշների դեպքում տարբերությունը ավելի ակնհայտ է: Օրինակ՝ չարը մութ է, բարին լուսավոր է: Լավ կլինի, եթե նրանք նկարեն այդ չարն ու բարին, ուրախն ու տխուրը: Երեխաները դա հրաշալի են անում: Հետո էլ դասարանում կփորձեն հականիշ չունեցող բառերի համար «հականիշներ» փնտրել և դրանց շուրջ պատմություն հորինել:

հատակ - առաստաղ

մատիտ - թուղթ

գիրք - տետր

Երեխաները պիտի անպայման պատճառաբանեն, թե ինչու են հենց այդ բառը համարում տրված բառի հականիշը: Իսկ դա շատ հետաքրքիր է, թող որ երբեմն ոչ այնքան համոզիչ և մեկ համար ոչ այնքան հասկանալի:

Հոմանիշների դեպքում նախ երեխաների ուշադրությունը պետք է հրավիրել բառերի իմաստային ընդհանրության վրա:

- *Կարդալ* բառի փոխարեն կարո՞ղ ենք *ընթերցել* բառը օգտագործել: Փորձիր:

- *Խփել* և *հարվածել* բառերը ինչո՞վ են նման:

- *Տուն* բառը ո՞ր բառով կփոխարինեք:

Հետո կարելի է խոսել դրանց իմաստների որոշ տարբերությունների մասին.

ուտել - խժռել

ծիծաղել - հռհռալ

Ամեն ինչ ավելի դյուրին կլինի, եթե երեխաները ցույց տան, թե ինչպես են ծիծաղում և ինչպես են հռհռում, ուտում կամ խժռում:

Ընդհանրապես, բառի կերպավորումը փոքրիկների սիրելի կբաղմունքն է (ցույց տալ շարժումով, նկարով, գույնով, ձայնով և ինչով կուզեք): Դրանից հետո կարելի է գուշակելու խաղ խաղալ՝ «Գտեք մեր պահած բառը»: Պատին ի՞նչը կփոխարինի, իսկ փողոցի՞ն: Պատասխանները ամենատարբեր կարող են լինել, նայած թե երեխան իմաստային ինչ համարժեք է գտել: Օրինակ՝ պատին՝ թուղթը, որովհետև երկուսի վրա էլ կարելի է գրել: Իրենց հորինած «հոմանիշների» շուրջ երեխաները պատմություններ կհորինեն, որը հաճախ կհանգեցնի բառերի վերաիմաստավորմանը:

Կար-չկար մի պատ, որ թուղթ էր: Այդ պատը ծալվում էր, ճմրթվում: Դա մեր իարևանի պատն էր, բայց թուղթ էր:

Առած-ասացվածքները նպաստում են երեխաների լեզվակցայողության և լեզվամտածողության կարգացմանը: Դրանք փոքր ծավալի մեջ մեծ ինֆորմացիա պարունակող նմուշներ են: Առածը կամ ասացվածքը կարդալուց հետո երեխաները անպայ-

ման պիտի արտագրեն դրանք: Ընտրված են այնպիսի առածներ, որոնք խորը ենթատեքստ չունեն և երևակայական աշխատանքի համար լավ հումք կարող են լինել: Օրինակ՝ «Շորի նորն է լավ, ընկերոջ՝ հինը»:

- Ի՞նչ է նշանակում հին ընկեր:

Նախ՝ երեխաները կբացատրեն, որ դա վաղուցվա ընկերն է, կխոսեն առածի իմաստի մասին, հետո ուսուցիչը հարցը այլ կերպ կառաջադրի:

- Պատկերացրեք, որ այդ ընկերը ոչ թե վաղուցվա է, այլ մաշված, հին ընկեր է:

Երեխաները կնկարագրեն մաշված ընկերոջը, կնկարեն, պատմություն կհորինեն մաշված ընկերոջ մասին.

Կար-չկար մի աքլոր կար: Սա շատ հին ընկեր ուներ: Այս ընկերը մաշվել էր, հալից ընկել: Ոչ ոք նրա վրա չէր նայում: Խեղճը բոլորովին քրքրվել էր: Աքլորն էլ ուզում էր օգնել իր ընկերոջը, բայց չգիտեր՝ ինչ աներ:

Կարելի է առածը փոփոխել:

Օրինակ. «Անբանը ուտելիս առողջ է, աշխատելիս՝ հիվանդ»:

- Անբանը էլ ե՞րբ է հիվանդ ձևանում (ասենք՝ ուրիշներին օգնելիս):

Կստանանք նոր առած. «Անբանը ուրիշներին օգնելիս հիվանդ է, հայ ուտելիս՝ առողջ»:

Այսպիսի առաջադրանքը նպաստում է նաև երեխաների անկաշկանդ մտածողությանը: Կարելի է նաև ամեն ինչ խառնել, առածը դարձնել ծիծաղելի.

Ընկերոջ շորն է լավ, հնի՝ նորը:

Կդառնա բառերի ծիծաղելի շփոթ, իսկ դրանից կշահի երեխայի մտածողությունը: Պետք չէ վախենալ ամեն տեսակ անհավանական հորինվածքներից: Երեխան պիտի ազատ լինի: Դրան կնպաստեն «Այս էջը քոնն է» մակագրությամբ ազատ էջերը, որոնք շատ են գիրք-տետրում:

Խոսքը (բառ, նախադասություն, պատմություն) երեխայի ձեռքին և մտքում պետք է դառնա խաղալիք: Երեխան պետք է հնարավորություն ստանա տարբեր իմաստներով (բաժանելով դրանք կտորների, մասերի, փոխելով-վերաիմաստավորելով) խաղալ դրա հետ, և արդյունքում կմնա դրա գործածության բալմանությունը:

Հիդա Պետրոսյան

ՄԱՏԵՆԻԿ

Առաջին դասարանցու մայրենիի երկրորդ ընթերցարանը

Սիրելի՛ գործընկեր, Ձեր երեխան (աշակերտը) արդեն սովարտել է «Լիլիթ» ընթերցարանը: Նա տառագիտաբանաչ է, կարողանում է կարդալ բառեր և փոքրիկ նախադասություններ, հասկանալ դրանք: Հիմա նրան առաջարկում ենք առաջին դասարանի երկրորդ ընթերցարանը՝ «Մատենիկը»: Այն նկարազարդ գիրք-տետր է, որտեղ երեխան նաև գրավոր առաջադրանքներ կկատարի: Այստեղ հավաքված են գեղարվեստական արժեք ունեցող փոքրիկ ստեղծագործություններ, որոնց հեղինակները Ձեր երեխայի հասակակիցներն են՝ առաջին, երկրորդ դասարանցիները:

Ինչո՞ւ չենք ընտրել հայ դասական հեղինակների և այլոց մանկական ստեղծագործությունները, այլ նախընտրել ենք երեխաների աշխատանքները: Պատճառն այս է. հավանաբար Դուք էլ եք նկատել, որ մանուկների համար ստեղծված հայերեն գրականության մեջ շատ քիչ են այդքան փոքրիկ, մի քանի նախադասությամբ ավարտուն գործեր: Իսկ նոր կարդացող երեխայի համար ավելին հաղթահարելը դժվար է, երբեմն՝ անհնարին: Ահա այս պատճառով է, որ առաջարկում ենք այս ընտրանին: Կարծում ենք, որ այս գործերն իրենց պատկերային մտածողությամբ, պատկերների գունագեղությամբ ու մտածողության յուրահատկությամբ մոտ ու հարազատ են յոթ տարեկանին: Իսկ դասական հեղինակների մանկական ստեղծագործությունների մի մասը, ընդգրկված «Ոսկեմատենիկում», բանավոր կերպով, Ձեր միջոցով կյուրացնի երեխան: Իրեն հասցեագրված մյուս բարձրարժեք գեղարվեստական գործերը երեխան կկարդա ավելի բարձր դասարաններում:

Արդեն առաջին դասարանում ընթերցանությունը նպատակային է: Առաջին և գլխավոր նպատակն այն է, որ երեխան կարդա նյութը, հասկանա և կարողանա ասել, թե այն ինչի՞ մասին է: Նա կկարողանա ինքնուրույն կարդալ նաև առաջադրանքը, հասկանալ և կատարել պահանջը: Երեխան կարդալու է ինքն իր համար՝ մտքում թե շշնջալով՝ կարևոր չէ: Հիշեցնենք մեր մայրենիի ծրագրից մի դրույթ. «Հատկապես քիչ օգտակար է տեքստի մի քանի անգամ բարձրաձայն կարդալը, դա ձանձրացնում է աշակերտին ու խանգարում ընթերցելու նկատմամբ հետաքրքրություն առաջացնելուն: Մենք հաղորդակցական ընթերցանության

կողմնակիցներ ենք: Աշակերտները, անպայման նաև ուսուցիչը, բարձրաձայն կկարդան միայն դիմացինին ինչ-որ բան հաղորդելու համար (գաղափար, իրենց խոսքի հաստատումը, իրենց հույզն ու զգացումը)»: Այնպես որ երեխան բարձրաձայն կարող է կարդալ իր գրած բառը, շարադրությունը և ընդհանրապես այն, ինչ ուզում է, որ լսի դիմացինը (ծնողը, ընկերը, ուսուցիչը...):

Մենք չենք կարևորում նաև այն, թե երեխան այս փուլում ինչպես է կարդում՝ տառ առ տառ, վանկ առ վանկ, թե միանգամից ամբողջ բառը: Մեկ համար ամենագլխավորը հետևյալն է՝ երեխան հասկացա՞վ կարդացածը, հրաշալի է: Մենք նրանից այս փուլում ավելին չենք պահանջում: Մեր կարծիքով, կարդալ իմանալու չափանիշը վարժ կարդալը չէ, այլ կարդացածը հասկանալը: Իսկ մնացածը տեխնիկայի հարց է, որ կհղկվի ընթացքում, շատ կարդալուն զուգընթաց:

Երեխան ինքնուրույն է աշխատելու՝ ինքն է կարդալու առաջադրանքն ու ինքնուրույն կատարելու է այն: Իսկ ինչպե՞ս ստուգել արված առաջադրանքը: Դասարանում խմբակային ստուգումներ լինել չեն կարող (երբ մեկը կարդում է ճիշտ պատասխանը, մյուսները՝ ստուգում), քանի որ առաջադրանքի կատարումը խիստ անհատական է, հետևապես ստուգումը ևս պիտի լինի անհատական: Գիրք-տետրերը հավաքել, ուղղումներն անել և վերադարձնել երեխային՝ անօգտակար և ավելորդ աշխատանք ենք համարում, քանի որ փորձը ցույց է տալիս, որ երեխան սխալների ուղղմանն այդպես էլ չի նայում, իսկ եթե նայում էլ է, դրանից նրա իմացությունը չի ավելանում: Մեր կարծիքով, սխալների ուղղման միակ օգտակար ձևն այն է, երբ օգնում ենք երեխային, որ ինքը գտնի իր սխալը և ինքն էլ ուղղի այն: Խնդրեք երեխային նորից կարդալ իր գրած սխալ բառը, հեգել այն, կարդալ իր գրած նախադասությունը, լսել ինքն իրեն, կարդալ պատմությունը, ըստ իր բանավոր խոսքի՝ կետադրել այն (կգալ նախադասությունների ավարտը, դնել վերջակետերը): Դասարանում բոլոր աշակերտների բոլոր սխալները առաջարկված եղանակով ուղղել հնարավոր չէ, և դրա կարիքը չկա էլ: Դուք Ձեր այս մոտեցմամբ երեխային սովորեցնում եք նորից կարդալ իր գրածը, աշխատել իր գրածի վրա, գտնել իր սխալն ու ուղղել: Սա մի հատկություն է, որի ձևավորումն ու ամրապնդումը շատ կարևոր է հետագա ուսուցման համար: Իսկ իր սխալը գտնող և ուղղող երեխան իմացական տեսակետից շատ լուրջ և կարևոր մտային աշխատանք է անում:

Մենք սնագրության տետրեր, թղթեր պահելու իմաստը չենք տեսնում: Գիրք-տետրերը հենց աշխատանքային տետրեր են: Սնագրությունից մեծի պարտադրանքով արտագրող երեխան մեխանիկական աշխատանք է կատարում, որից և՛ հոգնում է, և՛ ձանձրանում (բոլորովին այլ է, երբ երեխան սեփական կամքով, որպես վերաբերմունք դիմացինի նկատմամբ, բացիկի, նամակի կամ թերթի համար նույնիսկ մի քանի անգամ արտագրում է նյութը): Մյուս կողմից մենք դեմ ենք փնթի, ջնջումներով լցված տետրերին, որոնք երեխայի մոտ կարող են արմատավորել անփութություն և թափթփվածություն: Ո՞րն է ելքը: Մենք առաջարկում ենք Ձեզ մեր փորձը: Գուցե Ձեզ էլ այն դուր գա: Եթե թերթեք մեր աշակերտների գիրք-տետրերը, բառերի մեջ, տողերի արանքներում կհանդիպեք փոքրիկ ծաղիկների, թիթեռնիկների և այլ պատկերների: Կտեսնեք գունավորած բառեր, նախադասություններ: Դրանք այն սխալներն են, որոնք ծաղիկների ու գույների մեջ թաքցրել են մեր աշակերտները, և արդյունքում ստացվել են ուրախ և աչքի համար հաճելի էջեր:

Գրավոր աշխատանքները բաժանվում են մի քանի խմբի:

ա) Արտագրություններ

Առաջին դասարանում կարևորում ենք արտագրությունները: Կարծում ենք, որ դրանք, որպես ընդօրինակություն, նպաստում են երեխայի ավելի վստահ ու գրագետ գրելուն: Մյուս կողմից՝ մենք սկզբունքորեն դեմ ենք մեխանիկական արտագրությանը, որից, կարծում ենք, երեխան ավելի շատ վնասվում է, քան օգտվում: Այդ պատճառով փորձել ենք գտնել ոչ միօրինակ, բազմապան և հետաքրքիր ձևեր, որոնց ժամանակ երեխան մեխանիկական աշխատանք չի կատարում: Նա կատարում է առաջադրանքը՝ արդյունքում նաև արտագրելով բառը, նախադասությունը կամ պատմությունը:

Այսպես օրինակ.

Այստեղ արտագրիր լույս տվող (իրար բարեկամ, ճերմակ, թաց, չոր, բարձրահասակ, ցածրահասակ...) բառերը:

Արտագրիր բաց թողնված բառը...

Արտագրիր՝ բաց թողնելով գծված բառերը: Հիմա կարդա երկուսն էլ:

Կարո՞ղ ես արտագրել՝ բառերի մի մասը նկարելով:

Արտագրիր և վերջում ավելացրու մեկ նախադասություն:

Արտագրիր թվերով ստացված պատմությունը:

Ուզում ես՝ արտագրիր խոսքերը, ուզում ես՝ նոր խոսքեր գրիր:

Նայիր թվերին և արտագրիր ստացված նախադասությունը:

բ) Գեղարվեստական նյութի հետ տարվող աշխատանքներ

Գեղարվեստական նյութի հետ տարվող աշխատանքն ունի որոշակի ուղղվածություն՝ աննկատ ցույց տալ նյութի գեղարվեստականությունը՝ գտնված բառ-պատկերը, արտահայտություն-պատկերը, բառի մակդիրային գործածությունը: Հնարավորություն է տրվում երեխային գտնելու ի՛ր բառն ու արտահայտությունը: Բերում ենք մի քանի օրինակ.

Արտագրիր բաց թողնված բառը կամ գտիր նոր բառ.

Արևը ինչպես ...., կախվել էր երկնքում և ծուղրուղու էր կանչում, արթնացնում էր մարդկանց: Իսկ աքաղաղը ներքևում քայլում էր, և նրա ... փետուրները, ինչպես... , լույս էին տալիս:

Կարո՞ղ ես շարունակել.
արևի նման գեղեցիկ
..... խորամանկ
..... վախկոտ
Կամ՝ հեռախոսի նման .....
աթոռի նման .....
բաժակի նման .....
Փորձիր շարունակել.
քամու պես .....
անձրևի պես.....
ուսուցչի պես.....
Կամ՝ փնթփնթան, ինչպես.....
ծիծաղելի, ինչպես .....
չխկչխկան, ինչպես
Կարո՞ղ ես շարունակել.
շողշողուն արև
շողշողուն .....
շողշողուն .....
Կամ՝ քնքուշ աղջիկ
քնքուշ .....
քնքուշ .....

Գեղարվեստական այս ստեղծագործություններում բնության երևույթները, կենդանիները, իրերը հիմնականում շնչավորված են, կերպավորված և հանդես են գալիս որպես ստեղծագործության հերոսներ: Հետևապես ճիշտ կլինի, որ երեխան նրանց բնութագրի, նրանց վարքագծից հետևություն անի, ցույց տա նրանց ինչպիսին լինելը: Երեխան արդեն կերպար բնութագրելու առաջին քայլերն է անում, որը շատ կարևոր ենք համարում գրականության ուսուցման համար:

Կերպարի բնութագրմանն ուղղված հարցեր են.

Ինչպիսի՞ն է այս նապաստակը:

Ինչպիսի՞ն է այս լուսինը:
Ինչպիսի՞ն է այս ծառը:
Ինչպիսի՞ն էր թիթեռը:
Նկարիր այս պատմության արևին:
Նկարիր առվակ-աղջկան:

Փորձը ցույց է տալիս, որ ստեղծագործությունն ընկալած երեխայի համար այս առաջադրանքը կատարելն առանձնապես դժվար չի լինում:

գ) Բառային աշխատանք

Ստեղծագործություններում հանդիպում են այնպիսի բառեր, որոնք, մեր կարծիքով, կարող են անհասկանալի լինել երեխային: Այդպիսի բառերը մենք դուրս ենք գրել կամ հենց ստեղծագործության մեջ օգտագործված բառակապակցությամբ, կամ կազմելով նորերը՝ խնդրելով, որ երեխան ինքը կազմի նոր բառակապակցություններ: Դուք այսպիսի բառերը նախօրոք կբացատրեք երեխային: Իսկ թե որքանով հասկանալի դարձավ բառը, ցույց կտան նրա կազմածները: Այսպիսի առաջադրանքի օրինակներ են.

Փորձիր շարունակել.
խճճված թել, խճճված ..., խճճված ...
ամուր սեղան, ամուր ...., ամուր ....
խոշոր փաթիլ, խոշոր ...., խոշոր ....
դեղին անապատ, ... անապատ, ...անապատ:

Բառային մյուս աշխատանքը կապվում է հոմանիշության ու հականիշության հետ: Կարևոր ենք համարել երեխայի ուշադրությունը հրավիրել լեզվական այս երևույթի վրա: Երեխան լեզվի կրողն է, սակայն լեզուն օգտագործում է առանց ուշադրություն դարձնելու լեզվական երևույթներին: Ուսուցման հենց առաջին տարում սկսվում է մայրենի լեզվի ուսուցումը: Երեխան մեծ սիրով է փնտրում գտնում իմաստով մոտ կամ իմաստով հակառակ բառեր: Սա այն աշխատանքներից է, երբ երեխան սկսում է իր բառապաշարում բառեր փնտրել: Երբ սկսի աշխատել, Դուք կհամոզվեք, որ նա այս լեզվական երևույթների հրաշալի կրողն է և առանց տերմինների և հասկացությունների անունները լսելու, առանց սահմանումների մասին իմանալու, որոնք նրա համար անհասկանալի և վնասակար վերացարկումներ են, կարողանում է առաջադրանքները կատարել:

Բառային աշխատանքի մյուս խումբը որոշակի յուրահատկություն ունի: Այն կապվում է երեխայի զգայողության և երևակայության հետ: Ահա այս տիպի առաջադրանքների մի խումբ.

Գրիր բառեր, որոնց մեջ ջուր (ծառ, ծաղիկ...) կա:

Գրիր բառեր, որոնք կապ ունեն ձմռան (աքաղաղի, մեղվի, ծաղկի, երկնքի...) հետ:

Գրիր անվախ (լացող, ուրախ, աղջիկ, տղա, լույս տվող, փոքր, մեծ, իրար բարեկամ, հրաշք, սառը, տաք, մայրիկ, բալիկ ....) բառեր:

Այստեղ Ձեզ պետք է խնդրենք ընդհանրապես չմիջամտել: Երեխայի պատասխանը շատ է անձնային լինելու, հիմնված իր զգացողության և երևակայության թռիչքների վրա: Հետևապես այն Ձեր զգացողության հետ կարող է ոչ մի կապ չունենալ: Եթե երեխայի գրած բառերը այնքան են հեռու Ձեր ընկալումից, որ կասկածում եք, թե պատահական բառեր են, հարցրեք երեխային: Նրանք սովորաբար (եթե Ձեզ վստահում են) մեծ սիրով և մանրամասնորեն բացատրում են: Երեխան առաջադրանքը կատարելիս երբեմն հիմնվում է ոչ թե զգացողության, այլ բառի իմաստային ընկալման վրա: Սա ևս ընդունելի է: Կարևորն այն է, որ նա ուշադիր նայի իր բառաշխարհին, ընտրի այնտեղից որոշակի պահանջի բավարարող բառեր:

Այս առաջադրանքների թվին է պատկանում նաև հականիշ բառերի հետ տարվող հետևյալ աշխատանքը.

ա) շատ - քիչ, ուրախ - տխուր, ուժեղ -..., քաղցր -...

բ) արև - ..., գլուխ - ..., ջուր - ...

Եթե աշխատանքի առաջին մասը ճշգրիտ է (երեխան պիտի փնտրի, գտնի հենց տվյալ բառի իրականում գոյություն ունեցող ու բոլորի կողմից ընդունված հականիշը, ապա երկրորդ մասում կլինի պատասխանների բազմազանությունն՝ կապված երեխաների աշխարհընկալման և զգացողության ինքնատիպության հետ:

դ) Ստեղծագործական շարադրություն

Շարադրությունների վերնագրերն ընտրված են այնպես, որ երեխան կա՛մ պատմի իր մասին, կա՛մ ներկայացնի այն երևակայական աշխարհը, որ դարձյալ իրենն է: Ուսուցիչը պիտի ընդունի, որ երևակայական թռիչքների մեջ երեխան անգերազանցելի է, և, հետևաբար, պիտի աշխատի լեզվական հարցերում օգնելիս՝ երևակայությանը չմիջամտել, եթե անգամ երեխայի ստեղծած պատկերներն իրեն անհասկանալի, անիրական կամ սխալ թվան:

«Մատենիկ» ընթերցարանի նպատակն է սկիզբ դնել այն ընթերցողի ձևավորմանը, որն իր կարդացածի նկատմամբ ունի սեփական, գուցե և ընդունվածից տարբերվող, բայց անպայման անձնային վերաբերմունք ու հիմնավորված կարծիք:

Մարիետ Սիմոնյան

ՈՍԿԵՄԱՏԵՆԻԿ

Առաջին դասարանցու բերանացի անելու ժողովածու

«Ոսկեմատենիկը» մանուկներին ուղղված ստեղծագործությունների, խաղերի, առածների և հանելուկների ժողովածու է: Այն նախատեսված է և՛ ծնողների, և՛ ուսուցիչների համար: «Ոսկեմատենիկը» առաջարկվում է ամբողջ ուսումնական տարվա համար:

Անվիճելի է, որ արդյունավետ աշխատանքի համար ժողովածուի ամբողջ նյութը ուսուցիչը պետք է անգիր իմանա: Ուսուցչի բանավոր խոսքը ուսուցման ամենակարևոր ու ամենանահրաժեշտ մասն է: Ոչ մի կատարյալ դասագիրք չի կարող փոխարինել նրա խոսքին:

Մինչև ուսումնական տարվա վերջը այդ նյութը բերանացի պիտի իմանան նաև աշակերտները: Սակայն ոչ մի դեպքում չի կարելի մեխանիկորեն անգիր անել տալ: Դա պիտի արվի խաղի, կենդանի և աշխույժ շփման միջոցով: Նա մի օր պիտի իր համար հայտնաբերի, որ ինքը հեքիաթը (բանաստեղծությունը, առակը...) անգիր գիտի: Մի խոսքով, երեխան ընթացքը չպիտի զգա, այլ տեսնի միայն արդյունքը:

Իսկ ինչո՞ւ անգիր:

Դա նպաստելու է բառապաշարի հարստացմանը, լեզվամտածողության զարգացմանը, ինքնադրսևորմանը...

Ուրեմն ամենից առաջ անգիր անելու միջոցների «տեխնիկայի» մասին:

Նախ ուսուցիչը ներկայացնում է ստեղծագործությունը: Հետո երեխաները նկարում են այդ գործը:

Նկարելիս կարելի է նաև պատրաստել անհրաժեշտ դիմակները, իրերը, ամեն ինչ հետագա ներկայացման համար: Հանձնարարելով նկարել՝ մենք փոխում ենք երեխայի զբաղմունքը. երկար լսելուց նա ձանձրանում է, ինչպես ցանկացած այլ բանով երկար զբաղվելուց:

Հետո երեխաները ներկայացնում են իրենց նկարած հերոսին, նկարած պահը և փորձում հիշել հերոսների խոսքը որքան հնարավոր է անփոփոխ: Հետո ուսուցիչը խաղ է սկսում: Որպես օրինակ վերցնենք «Պոչատ աղվեսը» հեքիաթը:

- Աղվեսն ի՞նչ ասաց, երբ պառավը կտրեց նրա պոչը:

- Պառավն ի՞նչ ասաց աղվեսին:

- Աղվեսն ի՞նչ ասաց կովին:

- Աղվեսն ի՞նչ ասաց արտին:

Եվ այսպես մինչև վերջ: Ամեն անգամ ուսուցիչն ու երեխաները նշում են ամենաճիշտ պատասխանը:

Հետո երեխաները սկսում են ներկայացնել հեքիաթը:

Սկզբում փորձում են արտասանել-ներկայացնել առաջին 2-3 նախադասությունը:

Հարցը մոտավորապես այսպիսին պիտի լինի. «Դու ինչպե՞ս կասես...»:

Սա առաջին հայացքից կարող է ձանձրալի թվալ: Սակայն նույն նախադասությունը կրկնվում է տարբեր լուծումներով, և երեխաները ուշադիր հետևում են, թե ով ինչպես է ասում: Նրանց համար դա խաղ է:

Հետո խումբ-խումբ՝ դասարանի համար ներկայացնում են քիչ ավելի մեծ հատված: Ասենք՝ աղվեսի պոչը կտրելուց մինչև աղջկանից կուժ ուզելը: Փորձում են բոլորը: Սա օգնում է նաև պասիվ երեխաների ակտիվացմանը: Ուսուցիչը հետևում է, որ երեխաները գործածեն ստեղծագործության բառերը: Պետք է նշել, որ ներկայացնել կարելի է ոչ միայն դիմակներով, այլև մատներով. ասենք՝ բութ մատը աղվեսն է, ճկույթը (մի քիչ կորացած) պառավն է...

Կարելի է որոշել հերոսների գույները և ստեղծագործությունը ներկայացնել գունավոր մատիտներով:

Ամեն ինչ կարելի է օգտագործել հերոսների փոխարեն, անգամ ձեռնոց ու գլխարկ: Վերջում մի փոքրիկ ներկայացում է պատրաստ լինում՝ 20-25 դերասաններով՝ ունենալով մի քանի աղվես, պառավ, արտ, աղբյուր...

Երեխաները կարող են հերոսների խոսքերը երգելով ասել, ռիթմիկ հատվածները՝ նույնպես:

Իհարկե, այս ամենը չի արվում մի դասի ընթացքում, մի օրում: Այս ամբողջ աշխատանքը մի ստեղծագործության հետ կատարվում է մի քանի օրում:

Երբ երեխաները անգիր գիտեն ստեղծագործությունը, արդեն կարելի է նրանով այլ կերպ աշխատել, այլ խնդիրներ լուծել: Պիտի սկսվի կրույց, դասարանական կրույց: Զրույցը վարողը ուսուցիչն է, կրույցի բանալին հարցերն են:

Հարցերը նույնպես պատահական չպիտի լինեն:

Նախ պիտի «քրքրել» ստեղծագործությունը:

ա. Որտե՞ղ է ապրում ...-ը (կամ նման այլ հարց). Որտե՞ղ է ապրում պառավը:

Որտե՞ղ է ապրում աղվեսը (արտը, աղբյուրը):

Պետք է օգնել երեխաներին տեսնելու նաև երկրորդական հերոսներին, կարևորել նրանց:

բ. Որտեղի՞ց է գալիս աղբյուրի ջուրը (չարչին):

գ. Ի՞նչ կապ ունեն հերոսներն իրար հետ:

Աղվեսը պառավի ի՞նչն էր:

Աղբյուրը արտի ի՞նչն էր:

դ. Ինչպիսի՞ն էր այս ... -ը (մակդիրի դիպուկ ընտրություն):

Ինչպիսի՞ն էր այս աղվեսը:

Ինչպիսի՞ն էր այս կալվորը:

ե. Համեմատություններ՝ ո՞ւմ է շատ նման. ո՞ւմ բոլորովին նման չէ:

Համեմատությունը ճանաչելու, հասկանալու, մտածողության զարգացման լավագույն միջոցներից է:

Ո՞ւմ է նման չարչին:

Ինչի՞ է նման աղբյուրը:

Աղբյուրը ամենաշատը ինչի՞ նման չէ:

Անվիճելի է, որ երեխան ամեն ինչ անցկացնում է սեփական պրիզմայի միջով: Ուրեմն, ամեն ինչի համեմատումը իր հետ և՛ հաճելի է, և՛ ուսանելի.

Ինչո՞վ է քեզ նման և ինչո՞վ՝ տարբեր:

Դու ի՞նչ կանեիր ... -ի փոխարեն:

Աղբյուրը քեզ նմա՞ն է. ինչո՞վ է նման և ինչո՞վ նման չէ:

Չարչու փոխարեն ի՞նչ կանեիր...

Երեխաները այս դեպքում նկատի են ունենում ամեն ինչ՝ արտաքինից մինչև սովորություններ: Եվ պետք չէ որոշակի ուղղվածություն տալ այս հարցին:

«Ոսկեմատենիկի» բոլոր ոտանավորները երեխաները պիտի անգիր իմանան: Բացի այն միջոցները, որ կիրառվում են հեքիաթի դեպքում (հատված-հատված փորձել կերպավորել, ներկայացնել), կարելի է կիրառել նաև խաղային այլ միջոցներ՝ հաշվի առնելով բանաստեղծության հանգային առանձնահատկությունը:

Այսպես, ուսուցիչն արտասանում է առաջին տողը, երեխաները կրկնում են: Ուսուցիչն արտասանում է երկրորդ տողը, երեխաները նախ ասում են առաջին տողը, հետո միայն կրկնում երկրորդը: Ուսուցիչն ասում է երրորդ տողը, երեխաները՝ առաջինը, երկրորդը, երրորդը: Ուսուցիչը՝ չորրորդը, երեխաները՝ առաջինը, երկրորդը, երրորդը, չորրորդը և այսպես մինչև վերջ:

Կարելի է ծափերով սովորել. սկզբում և՛ բանաստեղծության, և՛ ծափերի ռիթմը բավականին դանդաղ կլինի: Երկրորդ անգամ՝

ավելի արագ: Այսպես ռիթմը քիչ-քիչ արագացվում է: Վերջում ռիթմը շատ արագ է լինում:

Երեխաները ոտանավորը անգիր գիտեն, հետո՞...

ա. Հետո կարելի է սկսել բառակապակցություններ կազմելով՝ ինչպիսի՞...

Ասենք անցնում ենք՝ «Աղվեսն եկավ լանճիկ-լանճիկ»:

Աղվեսներն ինչպիսին են լինում (թիթիկ աղվես, փափկամաշ աղվես, սուրաչք աղվես...):

բ. Աղվես բառով բառեր հորինել: Սկզբում հորինում է ուսուցիչը, այսպես օրինակ՝ աղվեսաժպիտ, լուսնաղվես: Իսկ ինչպե՞ս կասեք այն չամիչին, որ աղվեսից է սարքված (աղվեսաչամիչ): Հետո երեխաներն են հորինում, փորձում բացատրել: Սկզբնական շրջանում ուսուցչի օգնությունը պետք է զգալի լինի:

գ. Ինչի՞ է նման, ինչի՞ հետ կհամեմատեք՝ (համեմատություն):

Աղվեսը ինչի՞ է նման (արևի՝ որովհետև դեղին է ու փայլուն):

Ինչո՞վ է քեզ նման:

Ինչո՞վ է քեզանից տարբեր:

դ. Ի՞նչ է սիրում անել:

ե. Հեքիաթ հորինել աղվեսի, հավի, ...-ի մասին:

Կարելի է անուններ տալ բանաստեղծության «հերոսին»:

Հարցերի այս շարքը շարունակվում է՝ կախված բանաստեղծության թեմայից:

Ասենք՝ ինչո՞ւ աղվեսը թևեր չունի:

Եթե հավերը թռչել կարողանային, ի՞նչ պիտի անեին աղվեսները: Կամ, ասենք՝ բանաստեղծության թեման արևն է:

Ի՞նչ է բերում արևը (առավոտ, լույս, լիքը ծիծաղ...):

Որտե՞ղ է քնում արևը (մոր գրկում, ինչո՞ւ՝ որովհետև մայր է մտնում):

Արևը տխուր լինո՞ւմ է, ե՞րբ:

Արևը ուրախ լինո՞ւմ է, ե՞րբ:

Ինչո՞ւ արևը այդքան շողեր ունի և ծակում է մեր աչքերը:

Մեր դեմքի վրա ի՞նչն է արևի նման:

Եթե արևը շատ է բարկանում, ի՞նչ է անում:

Այնպես արեք, որ հիմա դուք արևի նման լինեք:

Ի՞նչ կդնեիք արևի անունը:

Ի՞նչ կլիներ, եթե երկու արև լիներ:

Չմոռանանք, որ հաճախ երեխաների պատասխանները շատ ավելի կենդանի և հետաքրքիր հարցեր են հուշում: Պետք է ուշադիր լինել որսալու համար «յուրահատուկ հայտնագործություն» պատասխանները, բռնել այդ պատասխանի պոչից:

Ինչպես հեքիաթը ներկայացնելիս (և՛ տիկնիկներով, և՛ մատների շարժումներով, և՛ այլ առարկաների նմանեցնելով մեր հերոսներին), այնպես էլ բանաստեղծության դեպքում, ոչ մի բառ չպիտի փոխվի: Հետո միայն, երբ ոտանավորը բերանացի սովորած կլինեն, կարելի է.

1. պատմել ոտանավորը
2. հերոս մտցնել ոտանավորի մեջ
3. շարունակել ոտանավորը
4. փոխել իրադրությունը
5. շուռ տալ ոտանավորը՝ դերը փոխել
6. հաշվել քանի բառ կա բանաստեղծության առաջին տողում...
7. բանաստեղծության որևէ բառ փոխարինել այլ բառով

Եթե նկատեցիք, բանաստեղծության վրա աշխատելիս շատ բաներ արվում են այնպես, ինչպես հեքիաթի դեպքում:

Առածի ուսուցումը նույնպես կարելի է ներկայացման հասցնել:

- Աղվեսի քիթը խաղողին չհասավ, - ասում է խումբը, իսկ մեկը (կամ մի քանիսը) ցույց են տալիս ինչպես է ձգվում աղվեսը, փորձում քաղել: Խաղող կարող են լինել ձեռքերը, ճմրթած թուղթը, ձեռնոցը... Հետո Աղվեսը (կամ աղվեսները), շարունակելով խաղը, գուցե և ձեռքը թափ տալով ասում է՝ խակ է:

Հետո կարելի է առածների հիմքի վրա փոքրիկ պատմություններ հորինել: Հենց վերը բերված առածը կարելի է շարունակել, կամ խոսեցնել խաղողին, որը հասած է: Դա էլ կլինի շարունակությունը:

Անկախ ամեն տեսակ աշխատանքից, երեխան, որքան հնարավոր է, պիտի զգա լեզվի հակիրճությունը: Միասին փորձեք որևէ բառ հանել առածից, համեմատեք բնագրի հետ: Բառ ավելացրեք և դարձյալ համեմատեք:

Հանելուկները նույնպես պետք է նկարել:

Բառն անպայման ունի.

գույն - (ի՞նչ գույն ունեն աղվես, կաթ, ուլունք ... բառերը)

բույր - (ի՞նչ բույր (հոտ) ունեն արտ, աղբյուր, կով ... բառերը)

համ - (ի՞նչ համ ունեն կաթ, խոտ, կուժ ... բառերը)

բնավորություն - (ինչպիսի՞ն է՝ կամակո՞ր է, թե՞ խելոք է, թե՞...)

«Ոսկեմատենիկ» ժողովածուն ընդգրկում է նաև առաջին դասարանում ուսուցանվելիք երգերը, շարժուն խաղերն ու դրանց վարման կարգը:

Խաղը երեխային բնորոշ գործունեության տեսակ է, իսկ մեկ համար դարձել է երեխայի հետ համագործակցելու միջոց: Ինչպես տեսաք, խաղում ենք տառի հետ, բառի հետ, թվի հետ, նյութի հետ, սակայն այս խաղը ոչ թե ժամանց կամ զուտ զվարճալիք է ենթադրում, այլ ունի իր հստակ կանոնները: Սա ուսումնական խաղ է, որտեղ խաղավար լինելու մենաշնորհը միայն մեծերինս չէ: Մենք միշտ փորձում ենք ղեկը փոխանցել երեխային՝ թող փորձի, թող նաև շարչարվի՝ իհարկե իր ուժերի, իր հնարավորությունների չափով:

Կասկած չկա, որ մարմնամարզական խաղերն ու շարժախաղերը, ծիսական և ավանդական խաղերը ևս խիստ նպատակային են, մեծ ինֆորմացիա են պարունակում, և չի կարելի խաղալ՝ հանդուրժելով շեղում կամ թերացում:

Ստեղծագործել, հանկարծաստեղծել, վերափոխել հնարավոր է նախ ուղիղն ու շիտակը լավ պատկերացնելուց հետո: Մենք այսպես ենք խաղում:

Միգա Պետրոսյան

ԹՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Գիտելիքներ տալուց առաջ հարկավոր է սովորել մտածել, ընկալել, դիտել:

Վ. Սուխոմլինսկի

«Իմացումի հրճվանք» - այսպես է կոչվում այն միակ առարկան, որ ուսումնասիրվում է մեր նախակրթարանի I դասարանում: Այստեղ թե՛ մայրենին, թե՛ թվաբանությունը, թե՛ գեղարվեստը, թե՛ պարն ու մարմնամարզությունը առաջնային մի խնդիր ունեն՝ կգալի, լսելի, շոշափելի կամ տեսանելի ճանապարհով ստեղծել այն նյութական հիմքը, որի վրա երեխան իրեն հաղորդած կարողությունների, հմտությունների միջոցով ստանալու է գիտելիքներ իրեն շրջապատող կյանքից և կյանքի համար: Հետևաբար շատ կարևոր է, երբ երեխայի հետ աշխատանքը կազմակերպվում է իրականություն-վերացարկում-վերլուծություն ունցումներով: Եվ եթե Դուք էլ կարևորում եք այս մոտեցումը, կփորձենք մեր հավաքած և սիստեմավորած նյութերով օգտակար լինել Ձեր սանի կամ երեխայի հետ աշխատելիս: Թվաբանություն ուսուցանելու համար առաջարկում ենք 3 գիրք-տետր՝ նախաթվային շրջանի համար մեկ, թվային շրջանի համար՝ երկու տետր:

Ինչո՞ւ երեք, որովհետև հաշվի ենք առել կրտսեր դպրոցականին բնորոշ հատկանիշներից այն, որ նա շուտ է հոգնում, ձանձրանում, անընդհատ փնտրում է նորն ու թարմը: Բոլոր գիրք-տետրերն էլ ուղղված են երեխային՝ ինքնուրույն աշխատելու համար, և օգնելու են, որ ամրապնդվի ու լրացվի բանավոր հիմնական աշխատանքը դասարանում կամ տանը: Շատ լավ կլինի, եթե երեխան ունենա լավ նյութեր և գործիքներ՝ մկրատ, վրձին, սոսինձ, գունավոր մատիտներ, ֆլոմաստերներ, գունավոր թղթեր, ստվարաթուղթ: Իսկ ընդհանրապես թվաբանության ուսուցման համար պետք է օգտագործել այն ամենը, ինչ շրջապատում է երեխային, ինչը կարելի է համրել, համեմատել, չափել, դասավորել, ձևափոխել՝ սկսած հենց իրենից՝ երեխայից:

Ստորև ներկայացնում ենք I դասարանում թվաբանության ուսուցման երկու շրջանները (նախաթվային շրջան և թվային շրջան) իրենց խնդիրներով, որոնց հիման վրա էլ կազմված է գիրք-տետրերի այս շարքը:

I դասարան

Նախաթվային շրջան

1. Երեխաների ուշադրության և հիշողության կարգացում
2. Կողմնորոշում (վերև-ներքև, առաջ-ետ, աջ-ձախ, աշխարհագրական ուղղություններ, շուտ-ուշ)
3. Գույներ
4. Անընդհատ մեծություններ (երկար-կարճ, մեծ-փոքր, հաստ-բարակ)
5. Դիսկրետ մեծություններ (շատ-քիչ, նույնքան,
- քանակի անկախությունը տարածական դասավորությունից
- քանակի անկախությունը առարկաների չափերից
- քանակի անկախությունը ժամանակից)

Թվային շրջան

1. Բանավոր հաշիվ, համրանք
ա) ուղիղ համրանք
բ) հետ համրանք
գ) համրանք 1-ական, 2-ական... (ուղիղ, հետ)
2. Ավելացնել, պակասեցնել 1 տասնյակի սահմանում
3. Համրանք փայտիկներով (մի քանի փայտիկը մեկով փոխարինելը)
4. Համրանք դրամով 10-ի սահմանում (մի քանի դրամը 1-ով փոխարինելը)
5. Համրանք համրիչով 10-ի սահմանում
6. Թվագրություն
ա) հռոմեական
բ) կամայական-հորինովի
գ) արաբական
դ) հին հայկական
- ոչ դիրքային
- դիրքային (կարգեր, կարգային անցումներ)
7. թվերը կարգային գումարելիների տեսքով ներկայացնել
8. գործողությունների գրառում

ժամացույց

խնդիրներ

ա) ... -ով ավելի
բ) ... -ով պակաս
գ) ընդամենը

Նախաթվային շրջանի գիրք-տետրը «Խամաճիկ» նախաայբբենական պատկերապարդ ալբոմի հետ շատ ընդհանրություններ ունի: Նրանք երկուսն էլ առաջին աշխատանքային տետրերն են և իրենց ուրույն խնդիրներից կատ մի հիմնական, ընդհանուր խնդիր էլ ունեն՝ ինչպե՞ս աշխատել գիրք-տետրերով: Այստեղ առաջադրանքներ կան, որ երեխային ստիպում են նայել ուշադիր, առանձին դրվագներ հիշել, մտածել ու գտնել:

- Գտիր նկարների տարբերությունը:
- Առանձնացրու հոտով կամ ձայնով ճանաչվող առարկաները:
- Ցույց տուր յուրաքանչյուր կենդանու ձագը կամ բույնը:
- Գտիր՝ ով չկա:
- Ո՞րն է ավելորդ առարկան:
- Գտիր սխալները:
- Ցույց տուր ճանապարհը:

Այս փուլում հարմար են մատիտը, գրիչը, ֆլոմաստերը, վրձինն ու մկրատը: Այս ժամանակ երեխան ինքնակամակերպվելու, ինքնուրույն աշխատելու առաջին փորձերն է անում, և նա ինչ որ անի՝ հրաշալի է, մենք աննկատ նրա կողքին ենք, միայն հաջողություններին բարձրաձայն արձագանքենք:

- Ներկի՛ր նշված ուղղություններով:
- Թղթից այսպիսի բաժակ (գլխարկ, նավակ, շրիկան) պատրաստի՛ր:
- Առանց մատիտի ծայրը թղթից հեռացնելու՝ նկարի՛ր այսպիսի պատկերներ:
- Շարունակի՛ր նկարել ըստ օրինակի:
- Ավարտի՛ր նկարը:
- Կտրատի՛ր և վերադասավորի՛ր:
- Սա պատկերի մի մասն է, փորձի՛ր վերականգնել ամբողջը:

Վերև-ներքև, առաջ-ետ, աջ-ձախ կողմնորոշմանն ուղղված առաջադրանքները բարդ չեն լինի երեխաների համար, եթե նախօրոք նրանց հետ շարժուն խաղեր ենք կազմակերպել բակում, դասասենյակում, խաղասենյակում կամ խաղեր՝ աշխատասեղանի հարթության վրա:

- Վանդակի ներսում գտնվող ծիտիկները ներկի՛ր կարմիր գույնով, դրսում գտնվողները՝ դեղին գույնով:
- Ներկի՛ր դեպի ձախ թռչող թիթեռները:
- Ներկի՛ր դեպի աջ շարժվող կենդանիները:
- Ներկի՛ր գծից ձախ գտնվող շրջանները:
- Տղայի ձախ ձեռքին փուչիկ նկարի՛ր, իսկ աղջկա աջ ձեռքին՝ կամբյուղ:

- Ներկի՛ր այն երեխայի կգեստը, որի ձեռնաթիակը ձախ ձեռքին է:

- Գնդակից առաջ մրգեր նկարի՛ր, իսկ գնդակից հետո՝ բանջարեղեններ:

- Ներկի՛ր՝ հաշվի առնելով, որ թագավորը նայում է հայելուն:

- Կառուցի՛ր պատկերի մյուս կեսը:

Գույնն առարկայի աչքի ընկնող ամենավառ հատկանիշներից է, և աշխատանքներն այս ուղղությամբ պիտի սկսված լինեն երեխայի ավելի վաղ հասակից, երբ նա հեշտությամբ մտապահում է գույնը՝ կուգադրելով առարկային՝ գապարագույն, մանուշակագույն, նարնջագույն, տերևագույն: Օրվա տարբեր ժամերին, տարվա տարբեր եղանակներին հնարավոր կլինի երեխաներին ծանոթացնել գույների երանգներին ու տեսակներին (բաց, մուգ, տաք և սառը...): Գույնը, որպես առարկայի արտաքին ակնառու հատկանիշ, հեշտությամբ կարող է դառնալ առարկաները որոշակի հատկությամբ խմբավորելու առաջին պայմաններից մեկը: Հաջորդը ձևն է, որը նույնպես արտաքին հատկանիշ է, և երեխան այն կապում է որևէ առարկայի հետ (խնձորաձև, տանձաձև, ձվաձև): Չնի հետ շփումը հանգեցնում է *երկար-կարճ, մեծ-փոքր, հաստ-բարակ* հասկացությունների ներմուծմանը.

- Սլաքով նշիր՝ «ավելի մեծ է, քան...»:

- Համեմատիր շերտիկները՝ ամենակարճը, ամենաերկարը...

- Նկարում կենդանիները մեծությամբ գրեթե հավասար են, իսկ իրականո՞ւմ:

Անհրաժեշտ է, որ երեխան յուրացնի ձևերի, չափերի հարաբերականությունը: Երկար կամ կարճ, հաստ կամ բարակ, բարձր կամ ցածր լինելը հնարավոր է որոշել համեմատությամբ: Ավելի հեշտ կլինի ձևով նման, մեծությամբ տարբեր առարկաներ համեմատել (սկզբում երկու, ապա երեք և ավելի)՝ որոշելու համար ամենափոքրը, ամենամեծը, ամենահաստն ու ամենաբարակը, ամենակարճն ու ամենաերկարը և այլն:

Քանակ հասկացությունն արդեն կապված չէ առարկաների արտաքին հատկությունների հետ: Այն որպես առարկաների որոշակի խմբի ներքին հատկություն, տեսանելի կամ շոշափելի չէ և երեխաներին կհասնի ոչ միանգամից: Սկսենք առարկաների կարգավորված խմբեր կազմելուց:

- Ճերմակ թղթով փաթաթված բոլոր կոնֆետները միասին վերցրու փակ գծի մեջ:

- Բոլոր մրգերը միասին վերցրու կապույտ գծի մեջ, իսկ ծաղիկները՝ կարմիր:

- Սլաքով ցույց տուր, թե որտեղ ես դնելու բանջարեղենը, որտեղ՝ մրգերը:

- Ներկիր այն մկները, որոնց կարող է որսալ կատուն՝ առանց գիծն անցնելու:

- Ըստ նկարի առանձնացրու նապաստակի կերը ոչնու կերից:

Երբ արդեն կազմված են որոշակի հատկությամբ խմբավորված առարկաների բազմություններ, երեխան հեշտությամբ կարող է այդ բազմությունների տարրերը կարգավորել, դասավորել, ասենք՝ մեծից փոքր, կարճից երկար, հաստից բարակ (կամ հակառակը): Քանակ հասկացությունը երեխայի համար որոշ չափով շոշափելի կդառնա, երբ նա սկսի համեմատել երկու խմբերի առարկաների քանակները: Այստեղ պետք է բացառել համրանքը և առաջնորդվել միայն կուգորդման մեթոդով, երբ մի խմբին պատկանող յուրաքանչյուր առարկայի համապատասխանեցվում է մյուս խմբի մեկ առարկա: Միայն այս ճանապարհով պետք է որոշել շատը, քիչը, նույնքանը, ավելին, պակասը կամ հավասարը:

- Նկարիր այնքան ծաղիկ, որքան սունկ կա:

- Նկարիր այնքան կապույտ գնդակ, որքան պատկերված է նկարում և ավելի քիչ՝ կանաչ գնդակ:

- Նույնքա՞ն են արդյոք աթոռներն ու երեխաները:

- Հավասա՞ր են արդյոք ծառերի տանձերն ու խնձորները:

- Սլաքներով ցույց տուր այն շրջանակները, որոնցում նույնքան պատկերներ կան:

- Շրջագծի մեջ վերցրու այնքան թռչուն, որքան թիթեռ կա:

Առարկաները որոշակի հատկությամբ խմբավորելիս հաճախ պետք է ցույց տալ միևնույն խմբում ընդգրկված առարկաների չափերի աչքի ընկնող տարբերությունը (կոճակ, տիկնիկ, հեծանիվ...), որը չի անդրադառնում քանակի վրա: Նույն հետևողականությամբ, պետք է երեխաներին հասցնել քանակի անկախությունը առարկաների տարածական դասավորությունից, ինչպես նաև՝ ժամանակից: Այս դեպքում շատ հարմար է համեմատել տարրերի հավասար քանակ ունեցող բազմություններ, որոնցում առարկաները ակնհայտ տարբերվում են մեծությամբ, տարածական դասավորությամբ, կբաղեցրած տարածքով:

Քանակի փոփոխություն կարելի է անել միայն այն դեպքում, երբ երեխան ինքն է համոզվում (վերադասավորելով, տեղափոխելով՝ առարկաները խմբում), որ այն անփոփոխ է, քանի դեռ խմբում առարկա չենք դնում կամ վերցնում: Այս փուլում

հարմար է վուգորդման մեթոդով համեմատել 3-4 առարկա պարունակող խմբեր, որպեսզի երեխաների համար հեշտ լինի քանակային տարբերությունները տեսնելը: Այս գաղափարի ամրապնդմանը շատ է օգնում այն, որ երեխան փորձում է հավասարեցնել երկու բազմությունների տարրերը կամ խախտել հավասարությունը:

- Համեմատիր գնացքների վագոնների քանակը և նկարիր մի ուրիշ գնացք, որը ավելի շատ վագոններ ունի:
- Թիթեռնե՞րն են շատ, թե՞ ծաղիկները:
- Ներկիր այնքան խխունջ, որքան ձուկ կա:
- Պատկերի աջ կողմում նկարիր ավելի շատ խնձոր, քան նկարված է, իսկ ձախ կողմում՝ ավելի քիչ:
- Բոլո՞ր մրգերն են արդյոք հավաքել:

Այս գիրք-տետրում երեխաները ծանոթանում են >, <, = նշանների հետ և օգտագործում են «շատ», «քիչ», «հավասար» քանակ ցույց տվող բազմությունները համեմատելիս:

- Դիր համապատասխան նշանը՝ >, <, = :
- Նայիր նշաններին և նկարիր անհրաժեշտ քանակի թիթեռներ:
- Համեմատիր:
- Հավասարեցրու կույտերը:

Թվի գաղափարի ընկալմանը երեխան ավելի է մոտենում, երբ սկսում է կատարել գիրք-տետրի վերջում տրված առաջադրանքները:

- Խմբավորիր ըստ օրինակի:
- Շրջագծի մեջ վերցրու այնքան պատկեր, որքան ցույց է տրված օրինակում:

Նախաթվային շրջանի վերջում երեխաները պետք է ծանոթ լինեն պարզագույն երկրաչափական պատկերներին (քառակուսի, եռանկյուն, շրջան) և կարողանան դրանցով նոր պատկերներ հավաքել:

Թվային շրջան

Թվային շրջանն ամբողջացնող երկու գիրք-տետրերի գործածումը որոշակի բանավոր աշխատանքի շարունակություն է:

Երեխաները սկսում են համրել: Գիտենք, ասելու եք, որ շատ երեխաներ ավելի փոքր տարիքից են կարողանում հաշվել: Բայց եկեք չշտապենք. թվերը հերթով վարժ ասելը դեռ համրել չի նշանակում: Մաթեմատիկայի մեր ծրագրում ընդգծվում է Լ. Ն. Տոլստոյի հետևյալ միտքը. «Ով լավ կհասկանա համրանքը, նա հեշտ կհասկանա ողջ թվաբանությունը, ուրեմն պետք է համրել սովորեցնել կգույշ, առանց շտապելու, չթույլատրելով աշակերտին որևէ բան անգիր անել, այլ բացատրել ամեն մի գործողություն»: Արդյո՞ք վարժ կերպով ուղիղ և հետ համրել կարողացող երեխան պատկերացնում է, որ անընդհատ գումարում կամ հանում է: Սա չի նշանակում, թե երեխան համրանքն այս կերպ պիտի բացատրի, պարզապես շատ կարևոր է, որ նա գոնե առաջին տասնյակի ցանկացած թիվ ասելիս պատկերացնի առարկաների որոշակի քանակ: Երեխան հաշվում է փայտիկներով, լուցկու հատիկներով, հաշվիչով, համրում է հնարավոր ամեն ինչ. մեկ աթոռ՝ մեկ փայտիկ, երկու աթոռ՝ ևս մի փայտիկ: Հաջողդաբար ուղիղ և հետ համրանքի քայլերը կարելի է փոխել, դարձնել 2-ական: Բանավոր համրանքի ժամանակ շատ կարևոր է կանգ առնել տասնյակի ձևավորման, տասնյակն անցնելու, տասնյակը միավորների տեսքով ներկայացնելու վրա:

- 10 մանր փայտիկը 1 մեծ փայտիկով փոխարինել:
- 3 փայտիկը 1 մատիտով փոխարինել, ապա հաշվել մատիտները:

Հարմար է աշխատել փայտիկների կապոցներով: Օրինակ՝ 2-ական փայտիկով կապոցներ ունենալու դեպքում կարելի է համրել այսպես.

- Քանի՞ փայտիկ է 2 կապոցը:
- Մեկ կապոցին ավելացրու 3 փայտիկ և այլն:

Տարբեր գույնի քարտերից յուրաքանչյուրը, ըստ պայմանավորվածության, ցույց է տալիս առարկաների որոշակի քանակ:

կարմիր կանաչ դեղին

Այժմ փորձենք հաշվել խնձորները.

կարմիր կարմիր կանաչ
կանաչ կարմիր կանաչ
դեղին դեղին դեղին

Գունավոր քարտերը կարելի է փոխարինել երկրաչափական պատկերներով:

Անհրաժեշտ է, որ երեխաներն իրենք մեկմեկու առաջարկեն նմուշներ: Կարծում ենք, որ այս կարգի հետեւողական աշխատանքը բերելու է թվանշանի և գործողությունները գրանցելու նշանների անհրաժեշտության: Այստեղ էլ կարելի է չշտապել և երեխային հնարավորություն տալ, որ ինքը հորինի քանակը, քանակային փոփոխությունները, թվաբանական գործողությունները գրանցելու նշաններ: Թվային շրջանի գիրք-տետրերից

առաջինով աշխատել սկսելը հարմար է թվագրությունն սկսելիս:

- Գրիր, թե քանի ծաղիկ կա յուրաքանչյուր ծաղկամանում:

- Սլաքներով ցույց տուր յուրաքանչյուր խմբին համապատասխան թիվը:

Գիրք-տետրերում երեխան աշխատում է հիմնականում արաբական թվանշաններով, հռոմեական թվանշաններով, հռոմեական թվանշանների մի մասը ներմուծված է որպես կարգային համարակալման միջոց, մասնակի ծանոթանում է նաեւ հին հայկական թվագրությանը: Այս գիրք-տետրերում ենք սկսում երեխային քանի՞, որքա՞ն, ինչքա՞ն, որերո՞րդ, քանիերո՞րդ հարցերը տալ:

- Քանի՞ կատու կա:

- Խմբավորիր ըստ օրինակի և հաշվիր, թե քանի՞ խումբ ստացվեց:

- Քանի՞ քայլ է յուրաքանչյուր ճանապարհը:

- Ճանապարհի սլաքով նշված հատվածը Լիլիթն անցնում է 3 քայլով: Քանի՞ քայլով նա կանցնի ողջ ճանապարհը:

- Քանի՞ խորանարդ է հարկավոր դրանք այսպես շարելու համար:

- Գրիր, թե քանի եռանկյունուց է կազմված յուրաքանչյուր պատկերը:

Ինչպես արդեն նշել ենք, մեր նախակրթարանի I դասարանում ուսուցումն անառարկայական է, և այդ սկզբունքը պահպանելու դեպքում ճիշտ աշխատանքը կօգնի, որ թվագրությանը զուգահեռ երեխան տառաճանաչ դառնա: Կկարողանա ինքնուրույն կարդալ գիրք-տետրերի առաջադրանքները: 6-7 տարեկան երեխան դժվար կմտապահի թվաբանության (թվանշաններ, թվաբանական գործողությունների նշաններ, համեմատության նշաններ) և մայրենի լեզվի (տառեր, կետադրություն) նշանների տարրական, բայց բավական մեծ քանակը, եթե չի անցել հիմնավոր նախապատրաստական շրջան:

Նշաններին ծանոթացան, պիտի ամրապնդեն հիշողության մեջ դրանք օգտագործելով՝ գրելով, գրածը կարդալով: Այսպես

«+» - շատանալ, մեծանալ, ավելանալ, մոտենալ, միանալ...

«-» - քչանալ, պակասել, հեռանալ, պոկվել, անջատվել...

«+1» - մեկով ավելի, մեկով շատ, մեկով մեծ...

Գիրք-տետրում բազմաթիվ նկար-առաջադրանքներ օգնում են երեխային յուրացնել թվաբանության լեզուն.

- Լրացրո՛ւ թվերը և նկարներով ցույց տո՛ւր գործողությունը:

- Նկարը արտահայտի՛ր թվերով և գործողությամբ:

- Ի՞նչ են ցույց տալիս սլաքները:

- Սլաքով ցույց տո՛ւր նկարին համապատասխան գործողությունը:

- Նայի՛ր նշաններին և լրացրու թվերը:

- Գրի՛ր բաց թողնված թիվը (խոսքը անհայտի մասին չէ, երեխան կողմնորոշվում է նկարով):

Բազմաթիվ առաջադրանքներ ուղղված են թվի կազմությունը (տվյալ քանակի գոյացումը) հասկանալուն և թիվը կարգային գումարելիների տեսքով ներկայացնելուն.

- Այսքան միրգը տարբեր եղանակով տեղավորի՛ր 3 զամբյուղում:

- նույն 7 մատիտները տարբեր քանակներով տեղավորի՛ր տուփերում (2 տուփ, 3 տուփ, 4 տուփ):

- Տասական խմբավորի՛ր և հաշվի՛ր քանի տասնյակ և միավոր ստացվեց:

- Համրի՛ր տասնյակներով:

I դասարանում թվագրությունը սահմանափակել ենք 100-ով և եթե երեխան տարրական պատկերացում է կազմել երկնիշ թվի, թվի կարգի, կարգային անցման մասին, շատ ավելի հեշտ կլինի շարունակել համրանքն ու թվագրությունը:

Վերջում մի փոքր կխոսենք խնդիրների և չափումների մասին: Սրանց երեխան հանդիպում է նույն պահից, երբ առնչվում է ձև, քանակ հասկացություններին: Քանակի ցանկացած փոփոխություն խնդիր է, եթե հարկ կա պարզելու արդյունքը և կարևորն այն է, թե երեխան ինչպես է տարբերում պայմանը, հարցը, լուծումը: Հարկ չկա պնդելու, թե այս դեպքում ևս որքան կարևոր է պատկերավորումը (առարկաներով, նկարներով, գործողությամբ, նկարագրությամբ):

Չափման միավորի մասին խոսելիս առաջարկում ենք երկարության միավորներից օգտագործել մետրը, քանի որ չափման միավորի գաղափարը երեխայի գիտակցությանը հասցնելու համար հետևողական քայլեր են պահանջվում :

- Չափել թիկերով, ոտնաթաթով:

- Համեմատել տարբեր թաչափեր:

- Չափել քայլերով, համեմատել:

- Չափել կամայական երկարություններով (մատիտով, գրքով, ստվարաթղթե շերտիկով, փայտիկով):

Ժամացույցին և երեխային պետք է ծանոթացնել գործնականորեն.

- Ցույց տո՛ւր ժամը:
- Ժամը քանի՞սն է:
- Ժամը քանի՞սը կլինի կես ժամ հետո (15 րոպե անց...)

Երեխային առայժմ օգնում ենք ժամացույցից օգտվել, իսկ ինքներս անընդհատ փորձում ենք արժեքավորել ժամանակը: Մեր համալիրի կրթական հայեցակետում կա այսպիսի միտք. «Մանկան կրթության գործում ժամանակ կորցնելը երբեմն ժամանակ շահել է նշանակում: Անչափ դժվար է ավագի անհարկի միջամտությամբ երեխայի բնական զարգացմանը չվնասելը: Պարտավոր ենք միջամտել այն ժամանակ, երբ դա պահանջում է երեխայի բնական զարգացումը: Դժվար է, բայց՝ անհրաժեշտ»:

Անահիտ Արնաուդյան

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

«Իմացումի հրճվանք» առարկայի երաժշտության մասի ավանդման համար առաջին դասարանցուն, նրա ծնողին, ուսուցչին առաջարկվում է ուսուցանվելիք երգերի նոտաներն ու տեքստերը «Ոսկեմատենիկ» ժողովածուում:

Երգեցողությունը երաժշտական կրթության հիմնական բաղադրիչներից է: Բացի այդ, երեխան սիրում է երգել, երգը նրա համար առօրյա պահանջմունք է: Ուստի, օգտվելով դրանից, երգելու միջոցով ենք սկսում երեխայի մոտ զարգացնել երաժշտական ունակությունները՝ լսողությունը, երաժշտական հիշողությունը, ռիթմի զգացողությունը: Երգեցողությունը նպաստում է նաև խոսքի և բառի ճիշտ արտասանությանը: Երգելու ժամանակ բառի (վանկի, հնչյունի) արտաբերման առանձնահատկությունները շատ օգտակար կարող են լինել մայրենիի ուսուցման նախապրբենական շրջանում, երբ երեխան աշխատում է առանձին հնչյունները լսելու, առանձնացնելու, վանկերը, բառերը տարրալուծելու ուղղությամբ:

Երեխայի երգեցողական ապարատը շատ նուրբ է և գտնվում է աճման ու զարգացման ընթացքում: Պետք է առանձնակի ուշադրություն դարձնել նրա պահպանմանը: Հարկավոր է հետևել, որ երեխան երգի նուրբ, մեղմ, բնական մանկական ձայնով, առանց բղավելու: Բառը արտասանի հստակ, մաքուր, լրիվ, ոչ մի հնչյուն «կուլ չտա»:

Երգելու ժամանակ պետք է հետևել, որպեսզի երեխայի դիրքը, անկախ նրանից, նա նստած է, թե կանգնած, լինի ուղիղ, գլուխը բարձր:

Հատուկ շնչառական վարժություններ կատարելը չենք խրախուսում, դրանք կարող են ձանձրացնել երեխային, մանավանդ վարժության չստացվելու դեպքում թերարժեքության զգացում սերմանել: Ուսուցանելիս ոչինչ չի կարող փոխարինել երգի կենդանի, ճիշտ, պատկերավոր կատարմանը, որն էլ ուսուցչի կարևորագույն խնդիրն է:

Ուսուցչին, ծնողին, երեխային շատ կօգնեն ուսուցանվելիք բոլոր երգերի ձայնագրությունները, որոնք առաջարկում ենք ձայներիզով: Բայց այս ձայներիզը չի կարելի օգտագործել որպես ունկնդրման նյութ: Նախ՝ ունկնդրման նյութը ուսուցանվելիք նյութ չէ: Այս ձայնագրությունները երգերի ճիշտ կատարման օրինակներ են և պիտի ծառայեն անցնելիք նյութի ճիշտ կատա-

ռելուն և ամրապնդելուն:

Երաժշտական ճաշակի ձևավորման համար պարտադիր ենք համարում բարձրարժեք երաժշտական ստեղծագործությունների հնչելը երեխայի տարբեր տեսակի գործունեության ժամանակ: Երաժշտության ունկնդրման այսպիսի ձևի մեջ կա երաժշտական ստեղծագործության և երեխայի կոնկրետ գրաղմունքի փոխադարձ ներգործության միտում:

Երաժշտության ունկնդրման ժամանակ չի կարելի չարաշահել խոսքը, նրա դերը շատ սահմանափակ է լինելու: Ավելորդ խոսակցությունները երաժշտության մասին մասնատում են երաժշտությունից ստացած ամբողջական տպավորությունը: Երեխային չպետք է ստիպել հատուկ լսել, չպետք է բացատրել ունկնդրման կարևորությունը: Պարզապես պետք է երաժշտությունը միացնել և առաջարկել երեխային հանգստանալ երաժշտության տակ. նկարել, գրել, կարդալ, քայլել, շարժվել, դնելով միայն մեկ կարևոր պայման. չաղմկել և չխոսել, այլ յուրաքանչյուրը թող զբաղվի իր գործով:

Պարտադիր ենք համարում ստեղծել բարերար այն միջավայրը, որ պիտի տրամադրի երեխային ունկնդրել: Երաժշտության ունկնդրման ստեղծագործությունը մատուցելու երկու ճանապարհ ենք տեսնում: Դասարանը իր տրամադրությամբ, ակտիվության չափով ուսուցչին հուշում է, որ ունկնդրման համար բարերար մթնոլորտ է ստեղծված: Ուսուցչին մնում է պարզապես որոշել, թե ինչ ստեղծագործություն պիտի դնի: Երկրորդ ճանապարհը. ուսուցիչը ինքը պիտի համապատասխան մթնոլորտ ստեղծի երաժշտության ունկնդրման համար:

Երաժշտության ունկնդրման նյութերը ընտրելիս կարևորը քանակը չէ: Երեխան կարող է նույն երաժշտությունը լսել մի քանի անգամ: Այստեղ կարևորը ստեղծագործության արժեքն է:

Առաջին դասարանի երգերի ընտրությունը կատարելիս առաջնորդվել ենք Կոմիտասի հետևյալ դրույթով. «Երեխային պետք է տխուր երգ չտալ երբեք, այլ ամեն ինչ աշխույժ, եռանդ պիտի ներմուծի անոնց հոգիներեն ներս»:

Առաջարկում ենք հետևյալ երգերը.

1. Արև, արև
2. Հոպ, թռիր
3. Այբ, բեն, գիմ
4. Էս առուն
5. Աղջկեք, պար բռնեցեք
6. Վիճակի երգ

7. Դան, դան, դանեդան
8. Խնկի ծառ
9. Կթի երգ՝ «Իլիլի, դիլիլի»
10. Խնոցու երգ
11. Բոլոճկի երգ
12. Ճախարակի երգ՝ «Հոպ, մարալ»
13. Թագվորի մեր, դուս արի
14. Աղջիկ, աղջիկ Հերիքնապ
15. Զըպիկ, զըպիկ

Երգերի այսպիսի հերթականության պահպանումը պարտադիր չէ: Դասավար ուսուցիչը այն կարող է փոփոխել՝ «Իմացումի հրճվանք» առարկայի միասնությունը պահելու միտումով:

Ինչպե՞ս ուսուցանել երգը

1. Ուսուցիչը երգը երգում է ամբողջությամբ և ներկայացնում ձայնագրությամբ:

2. Բացատրում, մեկնում է երգի բովանդակությունը և տեքստում հանդիպող անծանոթ բառերը:

3. Ուսուցանվում է երգի տեքստը: Երեխան երգի տեքստը ոչ թե պետք է գրի ու անգիր անի, այլ սովորի դասի ժամանակ: Ժողովրդական երգերի տեքստերը կարճ, պարզ և պատկերային ոտանավորներ են: Ժողովրդական երգի հիմնական առանձնահատկությունը նրա սինկրետիկ, համաժամանակյա արվեստ լինելու մեջ է: Եվ մեղեդին սերտ կերպով առնչվում է երգի տեքստի արտասանության առոգանության հետ: Ուրեմն, երգի տեքստը սովորեցնելիս, ուսուցիչը պետք է աշխատի այն սովորեցնել ասերգելով, որպեսզի արտասանությունից երգին անցումը շատ կտրուկ չլինի: Այսինքն, երեխան պիտի չզգա, թե ինչպես հանկարծ արտասանությունը վերածվեց երգի: Սա է բնական և հեշտ ճանապարհը երգել սովորելու:

4. Երեխան սկսում է երգել ուսուցչի հետ միասին:

5. Երգը սովորելուց հետո այն չպետք է համարել ավարտված, պիտի անընդհատ կրկնել, շարունակել երգել, և գալիս է մի ժամանակ, երբ ամբողջական ձևավորվում է երգի կատարումը:

Հիմա բերենք օրինակ: Ինչպե՞ս ուսուցանել «Արև, արև» երգը:

Մանկական խաղերգ է, բովանդակությունը պատկերային, անծանոթ բառեր չկան: Երգը ներկայացնելուց հետո ուսուցիչը երեխաներին առաջարկում է երգի տեքստը իր հետ միասին սովորել: Տեքստը փոքր-ինչ յուրացնելուց հետո՝ ծափի միջոցով պետք է ամրապնդել երգի ռիթմական պատկերը: Ուսուցչի ղեկավարությամբ երեխաները տեքստը ասում են և տեքստային վան

կերին ու նրանց ռիթմական տեղողությանը համապատասխան ծափ են տալիս: Այնուհետև անցնում ենք երգի ասերգելուն: Երգի առաջին 8 տողը 4 անգամ կրկնվող մեղեդային երկտող է, որի առաջին տողը առոգանության առումով ձայնի աստիճանական բարձրացում է ենթադրում, երկրորդ տողը՝ աստիճանական իջեցում: Հաջորդ երեք տողը մեկ տողի կրկնողությունն է: Նույն մտքի հաստատման այս ձևը այստեղ ոգևորության արդյունք է, որն իր հետ անընդհատ ձայնի բարձրացում է բերում: Վերջին երկու տողերը հաստատման և ավարտի շեշտ ունեն: Սա՝ տեքստի ուսուցումը և ռիթմական պատկերի հետ ծանոթությունը:

Հիմա անցնում ենք երգելուն:

Ժողովրդական երգի մեղեդին ուսուցանելիս պետք է հիշել մի կարևոր հանգամանք: Ժողովրդական երգը լեզվի արդյունք է, այսինքն խոսքի ու տրամաբանական շեշտի և բառի ու վանկային շեշտի: Եթե մեղեդու մեջ այդ շեշտերը չերևացին, երգը կարելի է համարել խեղված ու չիրականացած:

Ուրեմն, մեղեդին սովորում ենք արդեն յուրացրած տեքստի հետ միասին՝ ընդգծելով բառային և տրամաբանական շեշտերը:

Սովորած երգի միջոցով կարելի է տարբեր երաժշտական խաղեր կազմակերպել: Այս խաղերը նույնպես նպաստում են երեխայի լսողության, երաժշտական հիշողության, ռիթմի զգացողության զարգացմանը:

Խաղի օրինակ:

Երեխային առաջարկվում է երգը երգելիս յուրաքանչյուր կենտ տողի (I, III, V և այլն) վերջին բառը կամ վանկը չերգել, մտքում պահել: Նույնը անել զույգ տողերի հետ, այնուհետև առաջին վանկերի հետ խաղալ:

Արև՛, արև՛, արի ...,
Քեզ բերել ենք աչքի լուս,
Քո քուրիկը՝ Լուսին...,
Բերեց չամիչ մեկ ման: Եվ այլն:

Խաղի մեկ այլ ձև:

Երեխան երգում է միայն կենտ տողերը, զույգերը չի երգում, այլ վանկերին համապատասխան ծափ է տալիս:

3-րդ ձևը:

Դասարանը ըստ աշակերտների քանակի բաժանվում է երգի տողերի քանակին համապատասխան և հերթականությամբ յուրաքանչյուր խումբը երգում է մեկ տող:

Կարելի է այսպիսի բազմաթիվ խաղեր հորինել՝ ելնելով երգի առանձնահատկությունից, դասարանի ակտիվությունից և ընկալունակությունից:

Ուսուցանվելու համար առաջարկվող երգերի մեջ կան պարերգեր: Երեխային չբացատրելով պարերգի հիմնական առանձնահատկությունը (թափառիկ խաղիկ և կրկնակ), խաղի միջոցով կարելի է հասնել այս առանձնահատկության զգացողությանը և նրա ամրապնդմանը:

Դասարանը բաժանում ենք երկու խմբի. առաջին խումբը երգում է թափառիկ խաղիկը, երկրորդ խումբը՝ կրկնակը կամ հակառակը: Պարերգերը շատ լավ են ընկալվում, երբ թափառիկ խաղիկները մեներգվում են: Սա մոտ է ավանդական կատարմանը: Պարերգի այսպիսի ուսուցմամբ երեխան շատ հեշտ ընկալում է այդ ժանրի առանձնահատկությունը: Եւ երբ ուսուցիչը զգում է, որ դասարանը արդեն պատրաստ է ստեղծագործելու, երեխաներին առաջարկում է կոնկրետ պարերգին համապատասխան թափառիկ խաղիկներ հորինել:

Ուրեմն, երգեցողության միջոցով կարելի է նաև զարգացնել երեխայի ստեղծագործական ունակությունները և երևակայությունը:

Լեյլա Կարապետյան

Բովանդակություն

Երկու խոսք 3

Ե՞րբ, ինչպե՞ս, և ինչի՞ց սկսել ուսուցումը 5

Մայրենի լեզուն առաջին դասարանում 7

Խամաճիկ
Առաջին դասարանցու պատկերապարդ տետր 11

Այբբենարան 13

Լիլիթ
Առաջին դասարանցու մայրենիի առաջին ընթերցարանը 15

Մատենիկ
Առաջին դասարանցու մայրենիի երկրորդ ընթերցարանը 19

Ոսկեմատենիկ
Առաջին դասարանցու բերանացի անելու ժողովածու 25

Թվաբանության ուսուցումը առաջին դասարանում 31

Երաժշտությունն առաջին դասարանում 41

Նշումների համար

Ստորագրված է տպագրության՝ 05.09.1994 թ.:Չափսը՝. 60x84$^{1/16}$:
Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթ օֆսեթ N1: Հրատ. 3 մամուլ:
Պատվեր՝ 046: Տպաքանակ՝ 500:Գինը՝ պայմանագրային:

ՀՀ «Մխիթար Սեբաստացի» կրթական համալիրի «Շաղիկ» հրատարակչություն, Երևան, Հարավ-Արևմտյան կանգված, Բ-1 թաղամաս, Ա.Բաբաջանյանի փողոց:

Տպագրված է «Մխիթար Սեբաստացի» կրթական համալիրի «Շաղիկ» հրատարակչության տպարանում. Երևան, Հարավ-Արևմտյան կանգված, Բ-1 թաղամաս, Բաֆֆու փողոց 4:

©«Շաղիկ» հրատարակչություն